



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԵՆՈՒՄ

ՍՎԱԿԻՏԱԾՈՒՄ • ՓՈՐՁ • ԴՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի 2012 թվականի ուսումնագիտական
ու ֆինանսատնտեսական գործունեության
արդյունքները և 2013 թվականի բյուջեի նախագծի
հիմնական ցուցանիշները**

Երևան 2012

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՊՏՀ խորհրդի նախագահի ուղերձը
ՀՊՏՀ ռեկտորի ուղերձը**

Ներածություն

| | | |
|-----------|---|----|
| 1. | ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ..... | 7 |
| 2. | ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ.27 | |
| 3. | ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ..... | 36 |
| 4. | ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ..... | 43 |
| 5. | ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ..... | 47 |
| 6. | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ..... | 50 |
| 7. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ..... | 51 |
| 8. | ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | 53 |
| 9. | 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ..... | 59 |

**Եզրափակում
Հավելվածներ**

ՀՊՏՀ խորհրդի նախագահի ուղերձը



Հարգելի՛ բարեկամներ

Ինձ համար հաճելի է ողջունել մեր երկրի խոշոր համալսարաններից մեկի՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին, բոլոր աշխատակիցներին, ուսանողներին 2012 թ. ձեռքբերումների համար:

Անցած տարին նշանավորվեց համալսարանի զարգացմանը միտված նշանակալի իրադարձություններով և փոփոխություններով:

Համոզված եմ, որ համալսարանում կատարված փոփոխություններից շատերի արդյունքները տեսանելի կլինեն արդեն 2013 թվականին, իսկ դրանցից որոշները տարեցտարի կփոխեն համալսարանի կերպարը, կմեծացնեն նրա կրթական ու գիտական ներուժը՝ դարձնելով այն էլ ավելի մրցունակ, միջազգայնացված և երկրի առջև ծառայող սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների լուծման առաջարկությունների մշակմանը պատրաստ:

Գլոբալ տնտեսությանը Հայաստանի ինտեգրման աստիճանի բարձրացումը նորանոր մարտահրավերներ է առաջադրում մեզ, բայց նաև ընձեռում հնարավորություններ, որոնց իրականացումը պայմանավորված կլինի, մասնավորապես, բարձրորակ, նախաձեռնող և ստեղծագործական մտածելակերպով օժտված տնտեսագետ մասնագետների առկայությամբ:

Հայաստանի տնտեսության հետագա զարգացումը հնարավոր է միայն նոր մտածելակերպով և բարձր արժեքներով առաջնորդվող երիտասարդ սերնդի պատրաստմամբ և այն գիտակցությամբ, որ մենք կարող ենք ու կհաղթահարենք առկա դժվարությունները՝ տարեցտարի մեծացնելով մեր երկրի մտավոր ու տնտեսական ներուժը:

ՀՈՎԻԿ ԱՐԲԱՍՅԱՆ
ՀՀ Ազգային ժողովի նախագահ,
ՀՊՏՀ խորհրդի նախագահ

ՀՊՏՀ ռեկտորի ուղերձը

Հարգելի՛ գործընկերներ, սիրելի՛ ուսանողներ

Ներկայացվող հաշվետվությունը պարունակում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012 թվականի գործունեության հիմնական արդյունքները:

Հաշվետվությունում արտացոլված են համալսարանի 2012 թ. ձեռքբերումները, ինչպես նաև խնդիրները, որոնք մեզ վիճակված է լուծել առաջիկայում:

Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում շարունակվել են կրթության որակի բարելավման, գիտահետազոտական աշխատանքների ակտիվացման, արտաքին կապերի ընդլայնման ու խորացման աշխատանքները:

Չնայած որոշակի ձեռքբերումներին, որոնք հիմնականում առնչվել են բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին, ձեռնարկվող վերափոխումներն, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել կրթական ծրագրերի բովանդակությանն ու որակին, ինչը լուրջ խոչընդոտ է եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ինտեգրման տեսանկյունից:

Առկա հիմնախնդիրները պետք է դիտարկել որպես ազդակներ համալսարանի մրցունակության բարձրացման, եվրոպական բարձրագույն կրթական տարածքում արժանապատիվ ինտեգրման գործընթացի արդյունավետության ապահովման համար:

Համոզված եմ, որ համալսարանն ունի անհրաժեշտ ներուժ առկա հիմնախնդիրների լուծման և զարգացման որակապես նոր ուղեգիծ դուրս գալու համար: Այդ ամենը հնարավոր կլինի մեր կազմակերպվածության և պատասխանատվության աստիճանի բարձրացման, երիտասարդ սերնդին կրթելու և դաստիարակելու, մեզ վստահված պատասխանատու գործին անմնացորդ նվիրվելու միջոցով:



ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվությունը պարունակում է 2012 թ. ընթացքում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կատարված աշխատանքի արդյունքները:

Զարգացնելով տնտեսագիտական կրթության լավագույն ավանդույթները՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանն այսօր դարձել է հանրապետության առաջատար գիտակրթական հաստատություններից մեկը, որտեղ ձեռնարկվում են նորաստեղծական զարգացման ուղի դուրս գալու առաջին քայլերը:

Անցած տարում ևս մեր երկրում շարունակվել է կրթության օրենսդրության և նորմատիվային հենքի փոփոխության գործընթացը: Մշակվող իրավական ակտերը, կրթական օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունները և լրացումները նպաստել են բարձրագույն դպրոցի նպատակների և խնդիրների էական բարեփոխմանը:

Մենք կարևորում ենք այն, թե ինչն է պահանջում աջակցություն ու զարգացում և ինչը խոչընդոտում համալսարանի զարգացմանը: Ընդ որում, էական է հնարավոր բացասական դրսևորումների ոչ միայն վերացումը, այլև կանխարգելման եղանակների ու կառուցակարգերի հայտնաբերումը:

Հաշվետվությունն ընդգրկում է համալսարանի գործունեության տարբեր բնագավառներում ձեռնարկված փոփոխությունների մանրամասն նկարագրությունը և իրերի վիճակը հաշվետու տարվա վերջի դրությամբ: Բացի դրանից, ներկայացվում են ենթակառուցվածքային, ռեսուրսային, որակական ցուցանիշները՝ կապված ուսումնական գործընթացի արդյունքների, ինչպես նաև մի շարք նախագծերի հետ:

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1.1. Կրթական գործունեության կազմակերպում

Կրթական գործունեությունը համալսարանում իրականացվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությանն առնչվող Կառավարության որոշումների, կրթության և գիտության նախարարության և ներհամալսարանական նորմատիվ փաստաթղթերի, ՀՊՏՀ կանոնադրության և զարգացման ծրագրի համաձայն:

Որպես կրթական գործունեության կազմակերպամեթոդական հենք օգտագործվում են հիմնական ծրագրերի փաստաթղթային փաթեթները, որոնք ներառում են ուսումնական պլանները, դասընթացների, փորձառության ծրագրերը, ուսուցման որակն ապահովող նյութերը, շրջանավարտների պետական ատեստավորման ամփոփիչ ծրագրերը:

Կրթական գործընթացը ՀՊՏՀ-ում նպատակաուղղված է աշխատաշուկայում մրցունակ, մասնագիտությամբ և հարակից բնագավառներում արդյունավետ աշխատելու ունակ, երկրի սոցիալ-տնտեսական պահանջունքներին, էթնոմշակութային և ազգային առանձնահատկություններին համապատասխանող, բարձր որակավորմամբ մասնագետների ձևավորմանը:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագետների պատրաստումն իրականացվում է եռաստիճան կրթական համակարգով:

ՀՊՏՀ-ն ունի 6 ֆակուլտետ, 25 ամբիոն, հաստատված են բարձրագույն մասնագիտական կրթության 75 ծրագրեր, այդ թվում՝ բակալավրի պատրաստման 17 (11 մասնագիտացումներով), մագիստրոսի պատրաստման 17 (22 մասնագիտացումներով) և գործատուների հետ մագիստրոսի համատեղ պատրաստման 8 ծրագրեր:


Համալսարանն ունի 696 հիմնական հաստիքային աշխատող (01.12.2012 թ. դրությամբ): Պրոֆեսորադասախոսական կազմի թիվը 371-ն է, որից՝ 1 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 28 գիտության դոկտոր,

պրոֆեսոր, 9 գիտության թեկնածու, պրոֆեսոր, 4 գիտության դոկտոր, դոցենտ, 147 գիտության թեկնածու, դոցենտ, 65 գիտության թեկնածու, 11 դոցենտ և 92 հրավիրված անձինք, ովքեր հիմնականում պատասխանատու պաշտոններ են զբաղեցնում պետական կառավարման ապարատում, ֆինանսական ու բանկային համակարգերում:

Վարչակառավարչական, սպասարկող և ուսումնասովորական ստորաբաժանումներում աշխատում է 325 մարդ:

1.2. ՀՊՏՀ կրթական գործունեության ցուցանիշները

Ներկայումս ՀՊՏՀ-ում սովորում է 8058 ուսանող, որից առկա ուսուցման բակալավրիատում՝ 3940-ը, ինչը կազմում է բուհի ամբողջ ուսանողության 48.9%-ը, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 1021-ը կամ ուսանողների ընդհանուր թվաքանակի 13.7%-ը: Ընդհանուր առմամբ՝ առկա ուսուցման համակարգում սովորում է ուսանողների 62.6%-ը: Համալսարանի ուսանողության կազմը 2006-2012 թթ. ժամանակահատվածում ներկայացված է գծանկար 1.1-ում:



Գծանկար 1.1. Ուսանողների թիվը 2006-2012 թթ.

Ըստ գծանկարի տվյալների՝ առկա ուսուցման բակալավրիատի ուսանողների թիվը 2006-2012 թթ. նվազման միտում է դրսևորել՝ կրճատվելով ավելի քան 1000-ով: Միաժամանակ, առկա ուսուցման մագիստրատուրայում սովորողների թիվն աճել է ավելի քան 15 անգամ: Նույն միտումն է նկատվել հեռակա ուսուցման մագիստրատուրայում, ինչը բացատրվում է բարձրագույն կրթության երկրորդ աստիճանի կրթական ծառայությունների պահանջարկի մեծացմամբ:

2012 թվականին համալսարանի առկա ուսուցման բակալավրիատը թողարկել է 1272 շրջանավարտ, որից 183-ը ստացել են գերազանցության դիպլոմ (հավելված 1.4): Առկա ուսուցման մագիստրատուրան թողարկել է 435 շրջանավարտ, որից 85-ը ստացել են գերազանցության դիպլոմ (հավելված 1.5):

Հեռակա ուսուցման բակալավրիատը թողարկել է 230 շրջանավարտ, որից 3-ը ստացել են գերազանցության դիպլոմ (հավելված 1.6): Հաշվետու տարում համալսարանը առաջին անգամ ունեցել է հեռակա ուսուցման մագիստրատուրայի 59 շրջանավարտ՝ 6 մասնագիտացմամբ, որից 8-ը ստացել են գերազանցության դիպլոմ (հավելված 1.7):

Ավանդաբար առաջադիմության ցուցանիշներն օգտագործվում են ուսումնական գործընթացի կազմակերպման մակարդակի ընթացիկ բնութագրման համար:

2011-2012 ուսումնական տարվա առաջադիմության ցուցանիշները **առկա ուսուցման բակալավրիատում**, ըստ ֆակուլտետների և կիսամյակների, ներկայացված են 1.8-1.12 հավելվածներում:

Առկա ուսուցման բակալավրիատի 1-3-րդ կուրսերի ուսանողների առաջադիմությունը 2011-2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 69,0, իսկ լուծարքից հետո՝ 81,8%: Միայն գերազանց առաջադիմությամբ սովորողների տեսակարար կշիռը և՛ քննաշրջանից հետո, և՛ լուծարքից հետո հասել է 6,9%-ի: «Գերազանց» և «լավ» գնահատականներով սովորել է ուսանողների 14,9%-ը:

Առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների առաջադիմությունը 2011-2012 ուսումնական տարվա առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 72,2, լուծարքից հետո՝

85,4%: Միայն գերազանց առաջադիմությամբ սովորողների տեսակարար կշիռը և՛ քննաշրջանից հետո, և՛ լուծարքից հետո հասել է 10,2%-ի, իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը, համապատասխանաբար՝ 15,2 և 15,3%-ի:

2011-2012 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում առկա ուսուցման բակալավրիատի 1-3-րդ կուրսերի ուսանողների ընդհանուր առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 71,5, իսկ լուծարքից հետո՝ 84,8%: Գերազանց առաջադիմությամբ սովորել է ուսանողների 10,1, «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ քննաշրջանից հետո՝ 12,4, լուծարքից հետո՝ 12,6%-ը:

Նկատելի է, որ, ըստ կիսամյակների, 1-3-րդ կուրսերի առաջադիմության ցուցանիշներն էականորեն չեն փոփոխվել: Մինչդեռ 4-րդ կուրսի առաջադիմությունը երկրորդ կիսամյակում բարձրացել է. ընդհանուր առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 83,5, լուծարքից հետո՝ 96,6%: Գերազանց առաջադիմությամբ սովորողների տեսակարար կշիռը հասել է 29,5%-ի: Երևույթը մասամբ բացատրվում է 8-րդ կիսամյակի համեմատաբար թեթև առարկայական բեռնվածությամբ:

2010-2011 և 2011-2012 ուսումնական տարիների առաջադիմության ցուցանիշների (հավելված 1.13) համադրումից ակնհայտ է՝ 1-3-րդ կուրսերի ուսանողների ընդհանուր առաջադիմությունը նվազել է՝ առաջին կիսամյակում 8,4, երկրորդում՝ 4,4 տոկոսային կետով: Առաջադիմության փոփոխության դրական միտումները բնութագրական են նաև 4-րդ կուրսի ուսանողների համար. առաջին կիսամյակում նվազել է 4,9, իսկ երկրորդում՝ 0,3 տոկոսային կետով:

Հեռակա ուսուցման բակալավրիատի ուսանողների առաջադիմության ցուցանիշները համեմատաբար ցածր են (հավելվածներ՝ 1.14-1.19):

Հեռակա ուսուցման բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողները սովորել են կրեդիտային հենքով: 1-ին կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում քննաշրջանից հետո կազմել է 28,2, իսկ լուծարքից հետո՝ 59,9%: Միայն «գերազանց» գնահատականներ ոչ մի ուսանող չի ստացել, «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորել է ուսանողների 2,1%-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատի 1-ին կուրսի 2-րդ կիսամյակի ցուցանիշները հետևյալն են. ընդհանուր առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 24,7, իսկ լուծարքից հետո՝ 52,6%, միայն «գերազանց» գնահատականներ ոչ մի ուսանող չի ստացել, իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորել է 1,3%-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանողների ուսման առաջադիմությունը առաջին կիսամյակում, քննաշրջանից հետո կազմել է 46,9, իսկ լուծարքից հետո՝ 73,9%: Միայն «գերազանց» գնահատականներ ոչ մի ուսանող չի ստացել, իսկ «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորել է ուսանողների 2,4%-ը: 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի ուսման առաջադիմության ցուցանիշները հետևյալն են. քննաշրջանից հետո՝ 28,5, լուծարքից հետո՝ 63,7%: Միայն «գերազանց», ինչպես նաև «գերազանց» և «լավ» գնահատականներ ոչ մի ուսանող չի ստացել:

Հեռակա ուսուցման բակալավրիատի 3-4-րդ կուրսերում քննաշրջանից հետո ընդհանուր առաջադիմությունը կազմել է 28,0, լուծարքից հետո՝ 63,3%: Գերազանց առաջադիմությամբ սովորել է ուսանողների 0,8, «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ քննաշրջանից հետո՝ 5,8, լուծարքից հետո՝ 7,4%-ը:

Հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսում քննաշրջանից հետո ընդհանուր առաջադիմությունը կազմել է 50,0, լուծարքից հետո՝ 77,0%: Գերազանց առաջադիմությամբ սովորել է ուսանողների 39-43, «գերազանց» և «լավ» գնահատականներով՝ 12,1-14,4%-ը:

2010-2011 և 2011-2012 ուսումնական տարիների ուսման առաջադիմության ցուցանիշների համեմատությունից ակնհայտ է, որ ընդհանուր առաջադիմության ցուցանիշը նվազել է: Բարձր առաջադիմությամբ՝ հատկապես միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը շարունակում է մնալ ցածր (աղյուսակ 1.20): Ինչ վերաբերում է հեռակա ուսուցման բակալավրիատի 5-րդ կուրսերին, իրավիճակը նույնն է, և համեմատաբար բարձր ցուցանիշը պայմանավորված է թեթև առարկայական ծրագրերով:

Հեռակա ուսուցման համակարգում ցածր առաջադիմությունը բացատրվում է ընդունվողների համեմատաբար վատ պատրաստվածությամբ:

Առկա ուսուցման մագիստրատուրայում 1-ին կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում, քննաշրջանից հետո կազմել է 74,2, իսկ լուծարքից հետո՝ 89,3%, երկրորդ կիսամյակում, համապատասխանաբար՝ 78,4 և 91,2%: Այստեղ բարձր է «գերազանց» և «լավ» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը, ինչը բնական է, քանի որ մագիստրատուրա ընդունվել են համալսարանի բարձր առաջադիմությամբ շրջանավարտները:

Առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում, քննաշրջանից հետո կազմել է 80,3, լուծարքից հետո՝ 91,8%: Միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 25,8-26,1, բարձր առաջադիմությամբ սովորողներին՝ 17,2-17,4% (աղյուսակ 1.21):

Հեռակա ուսուցման մագիստրատուրայում 1-ին կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում, քննաշրջանից հետո կազմել է 66,5, իսկ լուծարքից հետո՝ 89,2, երկրորդ կիսամյակում, համապատասխանաբար՝ 46,8 և 80,9%:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների առաջադիմությունը առաջին կիսամյակում, քննաշրջանից հետո կազմել է 57,7, լուծարքից հետո՝ 83,8%: Միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը քննաշրջանից հետո կազմել է 4,7, լուծարքից հետո՝ 5,1%, բարձր առաջադիմությամբ սովորողներին՝ 17,9-21,8%: Երկրորդ կիսամյակում առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 60,5, իսկ լուծարքից հետո՝ 84,6%: Միայն «գերազանց» գնահատականներով սովորողների տեսակարար կշիռը կազմել է 8,3, բարձր առաջադիմությամբ սովորողներին՝ 24,1-27,6% (աղյուսակ 1.22):

Համալսարանից ուսման անբավարար առաջադիմության, զինվորական ծառայության մեկնելու և այլ պատճառներով 2011-2012 ուսումնական տարում ազատվել (հեռացվել) են. առկա ուսուցման բակալավրիատից՝ 275, հեռակա ուսուցման բակալավրիատից՝ 142,

առկա ուսուցման մագիստրատուրայից՝ 26 և հեռակա ուսուցման մագիստրատուրայից՝ 24 ուսանողներ, իսկ վերականգնվել են, համապատասխանաբար՝ 37, 60, 6 և 4 ուսանողներ (հավելված 1.23):

2011-2012 ուսումնական տարվա ուսման վարձի զեղչից, ըստ գործող կանոնակարգի, առաջին և երկրորդ կիսամյակներում համապատասխանաբար օգտվել են՝ առկա ուսուցման բակալավրիատի 400 և 306, հեռակա ուսուցման բակալավրիատի 156 և 65, առկա ուսուցման մագիստրատուրայի 34 և 55, հեռակա ուսուցման մագիստրատուրայի 43 և 75 ուսանողներ (հավելված 1.24):

Խնդիրները

Արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում կրթական բարեփոխումների և ուսման առաջադիմության ձեռքբերումները՝ կարծում ենք, որ առկա են նաև բազմաթիվ կուտակված հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրամայական պահանջ է:

1. Տարիներ շարունակ բուհում իրականացվել է բակալավրական և մագիստրոսական մասնագիտությունների ու մասնագիտացումների ավելացման քաղաքականություն, ինչի հետևանքով մի շարք մասնագիտությունների գծով, փաստորեն, պատրաստում ենք աշխատաշուկայում պահանջարկ չունեցող կադրեր: Այժմ ոչ միայն շուկայի թելադրանքով, այլ նաև ՀՀ Կառավարության պահանջով պարտավոր ենք շատ սեղմ ժամկետում հստակեցնել և խոշորացնել բակալավրական մասնագիտությունները:

2. Թեև վերջին տարիներին որոշակի աշխատանքներ են կատարվել ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարելագործման ուղղությամբ, այնուամենայնիվ, այդ ասպարեզում նկատվել են լուրջ բացթողումներ, որոնք դեռևս չեն ստացել ցանկալի լուծումներ: Մասնավորապես՝ թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ուսումնական պլաններում առկա են միմյանց կրկնող կամ ժամանակի պահանջներին չհամապատասխանող դասընթացներ, որոնք, մեղմ ասած, չեն նպաստում կրթության որակի բարձրացմանը:

3. Բավարար չափով և արդյունավետությամբ չեն կիրառվում կրթական նորագույն տեխնոլոգիաները, ինտերակտիվ ուսուցման եղանակները: Դասընթացների մի զգալի մաս ուսանողներին գի-

տամբթողական և գործնական հմտություններ չի հաղորդում, չի նպաստում նրանց մասնագիտական ունակությունների աճին:

4. Թեև սեմինար և գործնական պարապմունքների անցկացման արդյունավետության բարձրացման հարցերը մշտապես քննարկվել են ռեկտորատում և գիտական խորհրդում, սակայն դեռևս տեսանելի տեղաշարժ չի արձանագրվել. հազվադեպ են իրավիճակային վերլուծությունները, խմբային գործարար խաղերը, գործնական հաշվարկները: Ցածր է նաև բոլոր տեսակի փորձառությունների կազմակերպման արդյունավետությունը: Սեմինարների և գործնական պարապմունքների, ինչպես նաև փորձառությունների ցածր որակը շարունակում է համալսարանի աքիլեսյան գարշապարը համարվել:

5. Որոշ ամբիոններ և դասախոսներ թերանում են իրենց աշխատանքային պարտականությունների կատարման գործում, ժամանակին չեն նորացնում առարկայական ծրագրերը, թեստային բազաները, ինչի հետևանքով անհարկի լարվածություն է ստեղծվում համակարգչային և թեստային քննությունները կազմակերպելիս:


6. Կազմակերպական թերացումների և անբավարար հսկողության պատճառով դեռևս չեն վերացել ուսումնական և աշխատանքային կարգապահության խախտումները, զգալի է անհարգելի բացակայող ուսանողների թիվը:

1.3. Ուսանողների ընդունելությունը

2012 թվականին առկա ուսուցման բակալավրիատին հատկացվել է 948 տեղ, որից 82-ը (այդ թվում 10՝ ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով)՝ ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ, 866-ը՝ վճարովի համակարգում: Ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ ընդունվել է 96 դիմորդ, իսկ վճարովի համակարգում՝ 1062 դիմորդ: ԼՂՀ-ին հատկացված նպատակային տեղերը համալրել է 23 դիմորդ, նախապատրաստականից ընդունվել է 1 դիմորդ, սփյուռքահայերի համար կազմակերպված հարցազրույցով՝ 28 դիմորդ: Այսպիսով՝ առկա ուսուցման բակալավրիատ է ընդունվել 1210 դիմորդ: Հեռակա ուսուցման բակալավրիատ դիմել է 531 դիմորդ. մրցույթով ընդունվել են 452-ը:

Առկա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 493 դիմորդ. 167-ը համալրել են ուսման վարձի լրիվ (100%) փոխհատուցմամբ տեղերը, 326-ը՝ վճարովի համակարգինը: Հեռակա ուսուցման մագիստրատուրա է ընդունվել 331 դիմորդ:

Գործատուների հետ համատեղ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելություն է կազմակերպվել 8 մասնագիտացումներով՝ 300 տեղի համար: Մրցույթի արդյունքում ընդունվել է 201 դիմորդ: 2012 թ. ուսուցման բոլոր ձևերում ընդունվել է 2687 ուսանող: 2006-2012 թթ. ուսանողների ընդունելության տվյալները ներկայացված են գծանկար 1.2-ում:



Գծանկար 1.2. Ուսանողների ընդունելությունը 2006-2012 թթ.

1.4. Ուսումնամթողական աշխատանքներ

2012 թ. համալսարանի ուսումնամթողական աշխատանքների բնագավառում իրականացվել է կրթության համակարգի արդիականացմանն ուղղված միջոցառումների համալիր:

Դրանք իրականացվել են հետևյալ ուղղություններով.

1. Վերանմշակվել և արդիականացվել են բակալավրիատի ու մագիստրատուրայի մի քանի մասնագիտությունների ու մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը:

րը: Ամբիոնները շարունակել են բակալավրիատի ուսումնական մոդուլների թեստային բազաների բարելավումը և հարստացումը:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի պահանջները և ելնելով ուսման վարձի տարեկան չափից, համալսարանի գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 15-ի նիստի որոշմամբ բակալավրիատի (առկա և հեռակա) և մագիստրատուրայի (առկա և հեռակա) համար սահմանվել է մեկ կրեդիտի արժեքը, համապատասխանաբար՝ 7000 և 7500 ՀՀ դրամ:

3. Գիտական խորհրդի 2012 թվականի փետրվարի 29-ի նիստի որոշմամբ ուսումնական պլանների նորմատիվներում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- ուսումնական 20 շաբաթ տևողությամբ կիսամյակը կազմակերպվել է 17+3 շաբաթներով՝ առանձնացնելով ամփոփիչ քննաշրջանը, և այդ փոփոխություններն արտացոլվել են ուսումնական պլաններում,
- յուրաքանչյուր մասնագիտությունում թույլատրվել է ավարտական աշխատանք կատարել ավարտական կուրսի ուսանողների միայն 30-35%-ին,
- մագիստրոսական ատենախոսության ղեկավարման համար սահմանվել է 35 ժամ՝ կիսամյակային 5+5+25 կառուցվածքով,
- բակալավրիատի ավարտական աշխատանքի գրախոսման համար նախկին 3-ի փոխարեն հատկացվել է 5 ժամ, իսկ մագիստրոսական ատենախոսության գրախոսման համար՝ 15-ի փոխարեն 8 ժամ,
- մեկ գրավոր աշխատանքի ստուգման համար սահմանվել է 0,25 ժամ (միջանկյալ և ամփոփիչ գրավոր ստուգումների համար՝ 0,5 ժամ),
- ստուգարքով ավարտվող մոդուլների համար կազմակերպվել է միայն ամփոփիչ ստուգում՝ քննաշրջանին նախորդող ամսվա վերջին շաբաթվա ընթացքում,
- յուրաքանչյուր ուսումնական կիսամյակում հանձնարարվել է երկու անհատական աշխատանքից ոչ ավելի (ընդհանուր

մասնագիտական մոդուլներից՝ միայն «Տնտեսագիտության տեսություն» դասընթացից՝ 3-րդ կիսամյակում, իսկ մնացածը՝ մասնագիտացման մոդուլներից), դրանց պաշտպանությունը կազմակերպվել է ամփոփիչ քննաշրջանին նախորդող ամսվա առաջին երկու շաբաթների ընթացքում,

- մագիստրատուրայի գիտահետազոտական փորձառության ղեկավարմանը մեկ մագիստրանտի հաշվով հատկացվել է 0,5 ժամ՝ մեկ շաբաթվա համար, այսինքն՝ 10 շաբաթ տևողությամբ փորձառության ղեկավարման համար՝ 5 ժամ:

4. Գիտական խորհրդի 2012 թվականի մարտի 28-ի նիստի որոշմամբ ուսումնական պլանի նորմատիվներում և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի գործոնների կշիռներում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- 1) Քննությամբ ավարտվող մոդուլների համար «Ուսանողի անհատական աշխատանք» գործոնի կշիռն ավելացվել է «Ընթացիկ ակտիվություն» գործոնի կշիռն, այսինքն՝
 - ընթացիկ ակտիվություն՝ 30,
 - միջանկյալ ստուգում՝ 30,
 - ամփոփիչ ստուգում՝ 40:
- 2) Ստուգարքով ավարտվող մոդուլների համար հաստատվել են գործոնների հետևյալ կշիռները.
 - ընթացիկ ակտիվություն՝ 60,
 - ամփոփիչ ստուգում՝ 40:
- 3) 8-րդ կիսամյակի քննությամբ ավարտվող մասնագիտացման մոդուլներից մեկը տեղափոխվել է 6-րդ կիսամյակ՝ ուսումնական փորձառության փոխարեն, և դրան հատկացվել է 4 կրեդիտ, իսկ մյուսն ավելացվել է ընտրովի դասընթացներին:
- 4) Ընդլայնվել է ընտրովի դասընթացների ցանկն այնպես, որ ուսանողները հնարավորություն ունենան ընտրելու մեկից ավելի դասընթաց:
- 5) Ավելացվել է պետական քննության կրեդիտը՝ 9:
- 6) Ուսումնական և արտադրական փորձառությունները կազմակերպվել են 8-րդ կիսամյակում (12 կրեդիտ)՝ փետրվարի 9-ից, 8 շաբաթ տևողությամբ:

7) Առկա ուսուցման բակալավրիատում յուրաքանչյուր կիսամյակում քննությունների առավելագույն քանակ է սահմանվել 5-ը:

8) Մագիստրատուրայում հանվել է պետական քննությունը:

9) Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման բակալավրիատում հանվել է «Ընթացիկ ակտիվություն» գործոնը: Գիտելիքների ստուգումները կազմակերպվել են բանավոր՝ գրավոր փոխարեն, գնահատումն իրականացվել է 100 միավորային համակարգով:

10) Հեռակա ուսուցման բակալավրիատի 4-րդ և 5-րդ կուրսերում հանվել են ստուգողական աշխատանքները:

5. Գիտական խորհրդի 2012 թվականի մայիսի 11-ի նիստի որոշմամբ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածության նորմատիվներում կատարվել են փոփոխություններ. դրանք համապատասխանեցվել են ՀՀ Կառավարության 2007 թ. փետրվարի 1-ի N201-Ն որոշման պահանջներին:

6. Նույն նիստի որոշմամբ համեմատաբար դժվարությամբ յուրացվող «Բարձրագույն մաթեմատիկա», «Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն» և «Փիլիսոփայություն» առարկաների համար անհատական խորհրդատվությունների նորմատիվը վերանայվել է ու մեկ ուսանողի հաշվով սահմանվել 1 ժամ:

7. Գիտական խորհրդի 2012 թվականի մայիսի 31-ի որոշմամբ **Տնտեսական աշխարհագրության** ամբիոնը միացվել է **Մակրո-էկոնոմիկայի** ամբիոնին:

8. Գիտական խորհրդի 2012 թվականի հունիսի 20-ի որոշմամբ սահմանվել են ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմատիվների նոր բաղադրիչներ (համալսարանի գիտական խորհրդի և ուսումնամեթոդական խորհրդի նիստերին մասնակցելու համար սահմանվել է 30 ժամ բեռնվածություն, իսկ ֆակուլտետի խորհրդի նիստերին մասնակցելու համար՝ 20 ժամ):

9. Նույն նիստի որոշմամբ առկա ուսուցման բոլոր կրթական ծրագրերով (բակալավրիատ և մագիստրատուրա) փորձառության ղեկավարման համար նախկինում կիրառվող խմբային սկզբունքը փոխարինվել է անհատականով և մեկ ուսանողի հաշվով սահման-

վել շաբաթական 0,5 ժամ: Հեռակա ուսուցման մագիստրատուրայում գիտահետազոտական փորձառության ողջ տևողության համար մեկ ուսանողի հաշվով սահմանվել է 3 ժամ, իսկ գիտամանկավարժական փորձառության համար՝ 2 ժամ:

10. 2012 թվականի հուլիսի 12-ին համալսարանի խորհրդի որոշմամբ կատարվել են կառուցվածքային փոփոխություններ: Միաձուլվել են **Ապրանքագիտության և Տեխնոլոգիայի ու բնական գիտությունների** ամբիոնները, **Ֆիզդաստիարակության և Առաջին բուժօգնության և քաղաչաշտպանության** ամբիոնները, **Կորպորատիվ ֆինանսների և Ֆինանսական շուկաների և ինստիտուտների** ամբիոնները: Լուծարվել է **Պատմության և քաղաքագիտության** ամբիոնը: «Հայոց պատմություն» առարկան տեղափոխվել է **Փիլիսոփայության, իսկ «Քաղաքագիտություն»** առարկան՝ **Տնտեսական պատմության և իրավագիտության** ամբիոն:

Գիտական խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի որոշմամբ միաձուլված ամբիոններն անվանվել են՝ **Ապրանքագիտության և տեխնոլոգիայի, Ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղաչաշտպանության, Բանկային գործի և ապահովագրության: Հանրային ֆինանսների** ամբիոնն անվանվել է **Ֆինանսների** ամբիոն: **Պատմության և քաղաքագիտության** ամբիոնի լուծարման և «Հայոց պատմություն» առարկայի դասավանդումը Փիլիսոփայության, իսկ «Քաղաքագիտություն» առարկայի դասավանդումը Տնտեսական պատմության և իրավագիտության ամբիոններ տեղափոխելու կապակցությամբ նշված ամբիոններն անվանվել են **Փիլիսոփայության և հայոց պատմության** ամբիոն, **Իրավագիտության և քաղաքագիտության** ամբիոն: **Կառավարման տեղեկատվական համակարգերի** ամբիոնը վերանվանվել է **Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի** ամբիոն:

11. Նույն նիստի որոշմամբ գիտական խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 19-ի N 2 նիստի որոշման մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1) Կիսամյակի ընթացքում բակալավրիատի ուսանողների անհարգելի բացակայությունների 60 ժամի դեպքում դեկանի

կողմից տրվում է նկատողություն, 80 ժամի դեպքում՝ ռեկտորի կողմից նկատողություն, 90 ժամի դեպքում՝ ռեկտորի կողմից խիստ նկատողություն, իսկ 100 և ավելի ժամի դեպքում ուսանողը ենթակա է համալսարանից հեռացման:

- 2) Կիսամյակի ընթացքում մագիստրատուրայի ուսանողների անհարգելի բացակայությունների 30 ժամի դեպքում դեկանի կողմից տրվում է նկատողություն, 40 ժամի դեպքում՝ ռեկտորի կողմից նկատողություն, 50 ժամի դեպքում՝ ռեկտորի կողմից խիստ նկատողություն, 60 և ավելի ժամի դեպքում ուսանողը ենթակա է համալսարանից հեռացման:
- 3) Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերում ուսանողների գիտելիքների բազմագործոնային գնահատման «Ընթացիկ ակտիվություն» գործոնի փոխարեն կիրառվել է «Հաճախումներ և ընթացիկ ակտիվություն» միասնական գործոնը, և այդ փոփոխություններն արտացոլվել են «Կրեդիտային համակարգում գիտելիքների գնահատման և վարչարարության մեխանիզմի մասին կանոնակարգում» և համապատասխան կարգերում:

1.5. Կրթության որակ

Որակի ապահովման համակարգի ստեղծումը պայմանավորված է ինչպես ՀՀ Կառավարության որոշումներով այնպես էլ ՀՊՏՀ գործունեության արդյունավետության բարձրացման խընդրով:

Որակի համակարգի ստեղծումը ՀՊՏՀ-ում կարևոր է նախևառաջ ազատ, անկաշկանդ ակադեմիական բանավեճերի հարթակ ստեղծելու նպատակով, որտեղ գիտական միտքը և նորարարությունը, գործակցային հարաբերությունները բուհի արժեքային համակարգի ու որակի մշակույթի սկիզբը կդնեն:

Որակի մշակույթի ստեղծումը հիմնարար նշանակություն ունի մեր համալսարանի բարեփոխումների գործընթացում: Կցանկանայինք շեշտել, որ որակի ներքին ապահովման բուհական համակարգի ձևավորումը համապարփակ բարեփոխումների ոչ միայն անբաժան մասն է, այլև հիմնական շարժիչ ուժը:

Բարեփոխումները կկրեն ձևական բնույթ, եթե համալսարանը չիրականացնի ինքնավերլուծություն և չնախանշի ապագային

միտված ռազմավարություն: Առանց ինստիտուցիոնալ կարողությունների և ուսումնական գործունեության ինքնավերլուծության ու գնահատման ահնարին կլինի մեր համալսարանի գործունեության արդյունավետության բարձրացումը:

Այսպիսով՝ որակի ապահովման համակարգի ստեղծմամբ և զարգացմամբ ՀՊՏՀ-ն ձևավորում է բարեփոխումների մի շրջանակ, որը նպաստելու է բուհի կարողությունների վերլուծությանը, արժևորմանը և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև վարչական, ֆինանսական և ուսումնական գործունեության բարելավմանը:

ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների գնահատմանը նախորդելու են որակի ներքին ապահովման համակարգի ներդրման աշխատանքները:

Որակի ապահովման աշխատանքները իրականացնում և համակարգում է ՀՊՏՀ որակի ապահովման բաժինը, որը ստեղծվել է 2012 թ. հուլիսի 11-ին:

ՀՊՏՀ-ն իրականացնում է 2011 թ. դեկտեմբերի 20-ից մեկնարկած Համաշխարհային բանկի «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» ծրագիրը: Վերջինս նպատակաուղղված է ՀՊՏՀ-ում որակի ներքին ապահովման ստորաբաժանման ստեղծմանը, դրա գործունեության սկզբունքների և կանոնակարգերի մշակմանը, հետագա զարգացմանն ու հզորացմանը, որակի ներքին ապահովման մշակույթի ձևավորմանը, որակի ապահովման եվրոպական չափանիշներին համահունչ կրթության որակի ապահովման ներբուհական նոր մեխանիզմների ներդրմանը, դրանց անընդհատ վերանայմանն ու կատարելագործմանն ուղիների հստակեցմանը, ինչպես նաև նոր ընթացակարգերով և մեխանիզմներով որակի ներքին գնահատման իրականացմանը:

ՀՊՏՀ-ում որակի ապահովման համակարգի ստեղծման շրջանակում մշակվել են կրթության որակի ապահովման գործընթացների կանոնակարգմանն ուղղված մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝

- մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման հիմնական սկզբունքները,

- «Որակի ներքին ապահովման հայեցակարգը»,
- «ՀՊՏՀ ռազմավարության փիլիսոփայության ձևակերպման շրջանակը»,
- «ՀՊՏՀ որակի ապահովման շրջանակի ձևավորումը»,
- «ՀՊՏՀ որակի ապահովման մեխանիզմների մշակումը»:

2012 թ. ապրիլի 17-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կայացել է «Որակի ապահովման համակարգ. քաղաքականություն - ընթացակարգեր» թեմայով աշխատաժողով: Աշխատաժողովի նպատակն էր մասնակիցներին իրազեկել ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մասին, քննարկել որակի ապահովման համակարգի մշակման քաղաքականությունը և շրջանակը, ներկայացնել որակի ներքին ապահովման համակարգի գործընթացի կազմակերպման մեխանիզմը և գործունեության իրականացման ժամանակացույցը: ՀՊՏՀ աշխատակիցներից բացի աշխատաժողովին մասնակցել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչները:

ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության և գնահատման նպատակով իրականացվել է ուսանողների հարցում: Վերլուծվել և ամփոփվել են ուսումնական գործընթացի վերաբերյալ ուսանողների հարցման արդյունքները, որոնք հրապարակվել են 2012 թ. ապրիլի 17-ին կայացած աշխատաժողովում:

ՀՊՏՀ-ում պարբերաբար իրականացվում է ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ տվյալների հավաքագրում:

Առկա ռեսուրսների, բոլոր ստորաբաժանումների, կառուցվածքային միավորների և դրանց գործունեության վերաբերյալ հավաքագրված տվյալների հիման վրա ստեղծվել է տվյալների էլեկտրոնային բազա:

ՀՊՏՀ-ն ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացի համար նախատեսում է դիմում ներկայացնել 2013 թվականի նոյեմբերին:

ՀՊՏՀ որակի ապահովման գործընթացների կանոնակարգման, արդյունավետ իրականացման և փորձնական ինքնավերլուծության իրականացման համար են.

- որակի ապահովման խորհուրդ,

- ինքնավերլուծություն իրականացնող փորձագիտական խմբեր,
- որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուներ:

Ինքնավերլուծության աշխատանքներն ընթացքում են, որի արդյունքները կամփոփվեն 2013 թ. փետրվարին:

Այսպիսով՝ որակի ապահովման համակարգի ստեղծմամբ և զարգացմամբ ՀՊՏՀ-ն ձևավորում է բարեփոխումների մի շրջանակ, որը նպաստելու է բուհի կարողությունների վերլուծությանը, գնահատմանը և արդյունավետության բարձրացմանը:

Կրթության որակի ճանաչման, որակավորումների համադրելիության և մրցունակության ապահովման նպատակով ՀՊՏՀ-ն ակտիվ գործունեություն է ծավալում կրթական միջազգային կառույցներին անդամակցելու և արտերկրի համալսարանների հետ համագործակցելու ասպարեզում: ՀՊՏՀ կրթության կառավարման ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի և Որակի ապահովման բաժնի կողմից մշակվել և Տեմպուսի շրջանակում Եվրոպական հանձնաժողով են ներկայացվել բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրային առաջարկներ, որոնցից 3-ը հաղթել են մրցույթում: 2012 թվականից ՀՊՏՀ-ն կիրականացնի հետևյալ ծրագրերը.

1. «Համալսարան-գործատու Հայկական համակարգող գործակալություն», «Արարատ»

Առաջին անգամ հայաստանյան բուհը ղեկավարում է Տեմպուսի ծրագիր: Ծրագիրը եռամյա է և նպատակաուղղված է համալսարան-գործատու կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը: Ծրագրի գերնպատակն է, կրթության բոլոր շահակիցների հետ աշխատելով, ապահովել կրթության և աշխատաշուկայի կապը և իրականացնել դրա պահանջներից բխող կրթական բարեփոխումներ: Ծրագրի իրականացման ընթացքում կհզորացվեն ՀՊՏՀ կարողությունները, համալսարանը կզինվի նոր սարքավորումներով: Մի շարք մասնագիտությունների և առարկայական ոլորտների համար կմշակվեն ուսումնառության վերջնարդյունքներ, կիրապարակվեն ուսումնամեթոդական ուղեցույցեր: Արտասահմանում կվերապատրաստվեն ՀՊՏՀ աշխատակիցներ:

Այս ծրագրի կոնսորցիումում ներգրավված են 21 գործընկերներ:

2. «Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց»

Ծրագրի գերնպատակն է ստեղծել բարձրագույն կրթական հաստատությունների և գործատուների համատեղ միավորում, նպաստել Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացմանն ու մարդկային կապիտալի գնահատմանը: Այդ նպատակով կստեղծվի շրջանավարտների և գործատուների տվյալների համահայկական բազա, որը և կբարձրացնի շրջանավարտների ծառայողականությունը: Միաժամանակ, ուսումնական ծրագրերը կհամապատասխանեցվեն աշխատաշուկայի պահանջներին: Կմշակվեն որակավորումների եվրոպական ուղենիշներին համապատասխան մասնագիտական բնութագրիչներ: Արտասահմանում կվերապատրաստվեն ուսանողներ, շրջանավարտներ և ՀՊՏՀ աշխատակիցներ: Ծրագրի կոնսորցիումն ունի 18 անդամ:

3. «Կրթական վերափոխումների առաջնորդների պատրաստման նպատակով բարձրագույն կրթության կառավարման մագիստրոսական ուսումնական ծրագրի մշակում»

Ծրագրի նպատակն է եվրոպական ուղենիշներին և սկզբունքներին համապատասխան կրթության կառավարման ժամանակակից կրթական ծրագրի մշակումը: Կմշակվեն նաև կրթության առաջնորդների վերապատրաստման մոդուլներ, եվրոպական Միության համալսարաններում և միջազգային կազմակերպություններում վերապատրաստում կանցնեն ՀՊՏՀ դասախոսներ և վարչական աշխատողներ: Ծրագրի բարեհաջող ընթացքի դեպքում գործընկեր եվրոպական երկրների համալսարաններում, մասնավորապես՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, կճանաչվեն ՀՊՏՀ կրթության կառավարման մասնագիտացման որակավորումները: Ծրագրի կոնսորցիումն ունի 17 անդամ:

1.6. Ուսանողների փորձառությունների կազմակերպումը

2011-2012 ուսումնական տարում կազմակերպել է 6 փորձառություն՝

- գիտահետազոտական՝ առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (380 ուսանող), 10 շաբաթ տևողությամբ՝ փետրվարի 9-ից ապրիլի 19,
- նախադիպլոմային՝ 4-րդ կուրսերի համար (1150 ուսանող), 4 շաբաթ տևողությամբ՝ մարտի 24-ից ապրիլի 20-ը,
- ուսումնական՝ 3-րդ կուրսերի համար (1300 ուսանող), 4 շաբաթ տևողությամբ՝ հունիսի 29-ից հուլիսի 26-ը,
- գիտամանկավարժական՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (110 ուսանող), 6 շաբաթ տևողությամբ՝ ապրիլի 13-ից մայիսի 5-ը,
- գիտահետազոտական՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (110 ուսանող), 10 շաբաթ տևողությամբ՝ սեպտեմբերի 8-ից նոյեմբերի 17-ը,
- գիտամանկավարժական՝ առկա ուսուցման մագիստրատուրայի 2-րդ կուրսերի համար (380 ուսանող), 6 շաբաթ տևողությամբ, նոյեմբերի 3-ից դեկտեմբերի 14-ը:

Հարկ է նշել, որ ընթացքում լուրջ խնդիրներ չեն առաջացել: Որոշ կազմակերպություններ այս կամ այն պատճառով հրաժարվել են ընդունել գործուղված ուսանողների մի մասին: Այդ ուսանողներն անմիջապես տեղաբաշխվել են այլ կազմակերպություններում: Փորձառություններին առնչվող կազմակերպական աշխատանքները կատարվել են ամբողջությամբ:

«Զբոսաշրջության կառավարում» և «Հակաճգնաժամային կառավարում» մասնագիտությունների ուսանողների փորձառության կազմակերպման համար պայմանագիր է կնքվել մեր բուհի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության միջև, ձեռք են բերվել համաձայնություններ մի շարք խոշոր զբոսաշրջային կազմակերպությունների և հյուրանոցների հետ, որտեղ կազմակերպվել են վերոնշյալ մասնագիտությունների ուսանողների ուսումնական փորձառությունները:

Պայմանագրեր են կնքվել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական ծառայության, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի, «ՄԳԱ վոթըր» ՍՊԸ-ի, «Զերմուկ Գրուպ» ՓԲԸ-ի, «Եվրոպա» ՍՊԸ-ի, «ԱՍԱ» ՍՊԸ-ի հետ:

Կարիերայի և մարքեթինգի կենտրոնը ուսանողներին աշխատաշուկայում ներգրավելու նպատակով համագործակցել է մի շարք ընկերությունների հետ և ուսանողներին մասնակից դարձրել տարատեսակ ծրագրերի: Այդ համագործակցության շրջանակներում, ուսումնական պլանով հաստատված փորձառությանը զուգահեռ, ուսանողներից շատերը մրցույթների և հարցազրույցների արդյունքում մասնակից են դարձել «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի կազմակերպած «Երիտասարդ բանկիրների», «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ստաժավորման, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի ստաժավորման, «Մաքուր ջուր» ՍՊԸ-ի փորձառության ծրագրերին: Վերոնշյալ ստաժավորման ծրագրերին մասնակցելով՝ 30 ուսանող ընդունվել է աշխատանքի:

Կենտրոնն աջակցել է նաև ուսանողների աշխատանքի տեղավորմանը՝ ստանալով տեղեկատվություն ազատ աշխատատեղերի մասին տարբեր կազմակերպություններից և այն հրապարակելով համալսարանի պաշտոնական կայքում (asue.am) ստեղծված «Կարիերայի կենտրոն» ենթաբաժնում: Ազատ աշխատատեղերի և տարատեսակ աշխատաշուկաների, սեմինարների ու ծրագրերի մասին տեղեկատվությունն արդեն տարածվում է նաև սոցիալական ցանցերի միջոցով:

Փորձառության կազմակերպական ընթացքին առավել արդյունավետ դարձնելու նպատակով կենտրոնը կազմել է ժամանակացույց, որտեղ նշված են ոչ միայն փորձառության անցկացման, այլև ամբիոնների կողմից զեկուցագրերի ներկայացման և կենտրոնի աշխատանքների կատարման ժամկետները:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆ

2.1. Գիտահետազոտական գործունեություն

Բնագավառի ռազմավարական նպատակն է համալսարանի շրջանակներում հաշվեկշռված հետազոտական ու մշակումների և նորաստեղծական արդյունավետ համակարգի ձևավորումը, որը կապահովի կրթական, հետազոտական և նորաստեղծական գործընթացների ինտեգրումն ու տեխնոլոգիական արդիականացումը՝ մրցունակ գիտելիքների ու մասնագետների ընդլայնված վերատադրության, ինչպես նաև ձեռնարկատիրական հատվածի հետ արդյունավետ փոխգործակցության համար:

Նպատակին կարելի է հասնել հետազոտական համալսարանի ստեղծելու ճանապարհով, ինչը կապահովի մրցունակություն հետազոտությունների բնագավառում և դրանց առևտրայնացում մտավոր սեփականության շուկայում, ինչպես նաև բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման ոլորտում:

Աշխարհում հետազոտությունների ու մշակումների բնագավառում բարձրագույն կրթության հատվածի բաժնեմասը կազմում է 16-17%, իսկ հիմնարար հետազոտությունների բնագավառում՝ 50%:

Հայկական համալսարանները, այդ թվում՝ ՀՊՏՀ-ն, դեռևս նման հնարավորություններ չունեն: Այդուհանդերձ, կատարվում են որոշակի քայլեր հետազոտությունների ընդլայնման ուղղությամբ:

ՀՊՏՀ-ում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումների համատեքստում առանցքային է թողարկող և սպասարկող ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքների դերը, որոնք նպաստում են մի կողմից՝ ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը և փոփոխություններին ժամանակին ու պատշաճ արձագանքելու ամբիոնների կարողությունների մեծացմանը, իսկ մյուս կողմից՝ հայրենական տնտեսագիտական մտքի զարգացմանը, երկրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակմանը: Այս առումով համալսարանում իրականացվել են որոշակի աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում գիտահետազոտական աշխատանքներ են կատարվել 46 ամբիոնային թեմաներով (հավելված 2.1): Հետազոտությունները վերաբերում են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բանասիրության առավել արդիական, գիտագործնական նշանակություն ունեցող հիմնախնդիրներին: Ստացվել են գիտական որոշակի արդյունքներ տարածքային կառավարման և համաչափ զարգացման, կառավարչական հաշվառման մեթոդաբանության և կենսաթոշակային համակարգի կատարելագործման, տնտեսական բարեփոխումների սիներգետիկայի, մրցունակության գնահատման չափանիշների կատարելագործման, աշխատանքի շուկայի ու զբաղվածության, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում աշխատանքի առաջարկի գնահատման, ծառայությունների ոլորտի պայմանագրային հարաբերությունների բարելավման, ռազմավարական կառավարման, երկրորդային ռեսուրսների օգտագործման էկոլոգիատնտեսական ապահովման բնագավառներում:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմը 2012 թվականին իրականացված հետազոտությունների հիման վրա հրատարակել է 22 ուսումնական ձեռնարկ, 5 մենագրություն, 7 դասախոսության տեքստ, 390 գիտական հոդված, 71 ուսումնամեթոդական աշխատանք, 3 դասագիրք, 3 գրքույկ (հավելված 2.2): Արտերկրի գիտական հանդեսներում հրատարակվել է 59 հոդված:

2012 թվականին համալսարանում կատարվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ երկու թեմա՝ **«Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական և սոցիալական զարգացման վրա»** և **«Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում»:**

2012 թվականի ընթացքում, ըստ ժամանակացույցի, համալսարանում անցկացվել են սեմինարներ, կլոր սեղաններ և գիտական բանավեճեր՝ նվիրված երկրի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին, համաշխարհային տնտեսության զարգացման միտումներին:

2012 թվականի նոյեմբերի 16-18-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, նոր ձևաչափով, կազմակերպվել և անցկացվել է գիտական նստաշրջան՝ **«Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները»** խորագրով: Գիտաժողովին մասնակցել են ՀՀ վարչապետ Տ.Ս.Սարգսյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ.Մ.Դավթյանը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության նախագահ Ա.Վ.Ղազարյանը, ՀՀ ԿԲ նախագահի առաջին տեղակալ Ն.Հ.Երիցյանը, Երևանի պետական համալսարանի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և այլ բուհերի ներկայացուցիչներ:

Գիտական նստաշրջանը շարունակվել է Աղվերանում, որտեղ երկու օր կազմակերպվել են կլոր սեղաններ, որոնց մասնակցել են ՀՀ ԿԲ աշխատակիցները՝ ԿԲ նախագահի տեղակալ Ն. Երիցյանի գլխավորությամբ:

Կազմվել և ՀՀ գիտության պետական կոմիտե է ներկայացվել գիտական նստաշրջանի մասին ամփոփ զեկույց:

Պատրաստ է հրատարակման գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածուն՝ շուրջ 50 մամուլ ծավալով:

Միջազգային համաժողովներում համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմը ներկայացրել է մի շարք զեկուցումներ, որոնցից հրատարակվել են 59:

2012 թվականին համալսարանի աշխատակիցները մասնակցել են Գերմանիայում (Ֆրանկֆուրտ), Իտալիայում (Ֆլորենցիա, Ճենովա), Հունգարիայում (Բուդապեշտ), Բուլղարիայում (Պլովդիվ), Կանադայում, ՌԴ-ում (Դոնի Ռոստով, Չերոկսարի, Կուբան, Սարատով, Եկատերինբուրգ), Ուկրաինայում (Կիև, Դոնեցկ, Սումի), Վրաստանում (Թբիլիսի) անցկացված գիտաժողովներին և հրատարակել գիտական հոդվածներ:

Համալսարանի գիտական խորհրդի 2012 թվականի մայիսի 31-ի N 11 նիստի որոշմամբ 2012 թվականի սեպտեմբերի 1-ից գործողության մեջ է դրվել ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհների կարգը, համաձայն որի՝ առաջին անգամ հանրապետությունում հայտարարվել է ներհամալսարանական գիտական և գիտահետազոտական աշխատանքների կատարման մրը-

ցույթ: Մրցույթի արդյունքներով ընտրված գիտահետազոտական նախագծերը կֆինանսավորվեն 2013 թվականի հունվարի 1-ից:

2013 թ. համալսարանում հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացման և գիտական ներուժի լիարժեք օգտագործման նպատակով կատեղծվի հետազոտական կենտրոն: Ներքին դրամաշնորհների և կենտրոնի գործունեության ապահովման համար համալսարանի բյուջեում նախատեսվել է 100 մլն դրամի ներդրում:

2.2. Ուսանողների գիտահետազոտական գործունեությունը

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքը ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղկացուցիչն է: Այն կատարվում է ֆակուլտետներում, ամբիոններում՝ անհատական և ավարտական աշխատանքներ գրելիս, նախադիպլոմային փորձառություն անցնելիս, Ուսանողական գիտական ընկերության շրջանակներում:

Հաշվետու ժամանակահատվածում բազմաթիվ ուսանողներ մասնակցել են գիտական աշխատանքների՝ զեկուցումներով հանդես գալով ՌԻԳԸ նստաշրջաններում և միջազգային համաժողովներում: Մի շարք ուսանողներ արժանացել են մրցանակների:

Համալսարանի պատվիրակությունը մասնակցել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում կազմակերպված «Քաղաքակրթությունների երկխոսություն. ընդառաջ քայլ» խորագրով Երիտասարդության եվրասիական տնտեսագիտական համաժողովի երրորդ փուլի շրջանակներում տեղի ունեցած գիտաժողովին:

2012 թվականի հոկտեմբերի 31-ին անցկացվել է համահամալսարանական Ուսանողական գիտական ընկերության (ՌԻԳԸ) 34-րդ նստաշրջանը:

2012 թվականի հոկտեմբերին համալսարանի ֆինանսական, կառավարման, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների, հաշվապահական հաշվառման և աուդիտի, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետների 28 ուսանողներ մասնակցել և զեկուցումներով հանդես են եկել ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ անցկացված Հայ գրատպության 500-ամյակին և

ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության հիմնադրման 65-ամյակին նվիրված ասպիրանտների և երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովին:

Մեր ուսանողները մասնակցել են նաև նոյեմբերի 14-18-ը Վարշավայի տնտեսագիտության դպրոցի կազմակերպված «Փորձի փոխանակում» խորագրով միջազգային նստաշրջանին:

Այսպիսով՝ թեպետ բոլոր ֆակուլտետներում նկատվում է ուսանողների որոշ ակտիվություն գիտահետազոտական աշխատանքներում, այդուհանդերձ, ուսանողական գիտահետազոտական աշխատանքը դեռ չի հասել պատշաճ մակարդակի, ինչի մասին վկայում են, մասնավորապես, ՌԻԳԸ նստաշրջանի արդյունքները, ուսանողների համար հայտարարված ներքին գիտական դրամաշնորհների մրցույթին ոչ մի հայտ չներկայացնելը:

Խնդիրները

Չնայած հաշվետու տարում գիտահետազոտական աշխատանքների կատարման ուղղությամբ ձեռք բերված հաջողություններին՝ դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ. բացակայում է ամբիոնների միջև փոխգործակցությունը, նեղ է թեմաների ընտրության շրջանակը, երբեմն հեռու գործնական կիրառությունից, հետազոտությունների արդյունքները չեն հրապարակվում ու ներկայացվում շահագրգիռ պետական մարմիններ կամ մասնավոր հատվածի կազմակերպություններ, որոշ ամբիոններում ցածր է անձնակազմի ընդգրկվածությունը, ինչով չի կատարվում 2011 թվականի նոյեմբերի 30-ի գիտական խորհրդի որոշումը: Բացի այդ, դեռևս ցածր է միջազգային համագործակցության աստիճանը և համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի շարժունությունը:

Հաշվի առնելով, որ ապագայի համալսարաններն ավելի շատ հանդիսանալու են հետազոտական համալսարաններ, չի կարելի անտեսել որոշ ամբիոնների ոչ գործուն մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներին, բարձրարժեք գիտական հրապարակումների, միջազգային գիտական կապերի, կատարվող դրամաշնորհային թեմաների անբավարարությունը, մեր գիտնականների ոչ լիարժեքորեն ներգրավվածությունը հանրապետության կարևոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը,

ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներում միջամբիոնային համագործակցության բացակայությունը:

Ռեկտորատը, գիտության բաժինը, ամբիոնները պարտավոր են ակտիվացնել գիտահետազոտական գործունեությունը, իրական քայլեր կատարել հետազոտական համալսարան դառնալու ճանապարհին:

2.3. Բարձրագույն կրթության երրորդ աստիճան (ասպիրանտուրա)

2012 թվականի դրությամբ համալսարանի ասպիրանտուրայում սովորում են առկա ուսուցմամբ 28, հեռակա ուսուցմամբ՝ 94 ասպիրանտներ, որոնցից վճարովի հիմունքներով՝ 24-ը (հավելված 2.3):

Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել առկա ուսուցման համակարգում 10 (որից 1-ը՝ արտերկրից), հեռակա ուսուցման համակարգում՝ 13 դիմորդ: 2012 թվականին առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի 9 շրջանավարտից 3-ը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Հեռակա անվճար ուսուցման համակարգում սովորող ասպիրանտներից 8-ը ավարտել է (1-ը ազատվել է), 2-ը պաշտպանել է ատենախոսություն: Հեռակա վճարովի ուսուցման համակարգում սովորող ասպիրանտներից 19 ավարտել է, ատենախոսություն է պաշտպանել 2-ը:

Գիտական խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 5-ի N1 նիստի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել գիտական խորհրդի 2003 թվականի մարտի 29-ի N7 նիստի որոշման 3-րդ կետը («3. Հայցորդներ ձևակերպել նրանց, ում ատենախոսության թեմայի 60%-ը պատրաստ է և դրա վերաբերյալ հրատարակված է երկու աշխատանք») և հայցորդներ ձևակերպելիս հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը»:

Հաշվետու տարում տարբեր ամբիոններում ձևակերպվել է 16 հայցորդ (11-ը՝ վճարովի հիմունքներով): 12 հայցորդից, որոնց ժամկետն ավարտվել է, թեկնածուական ատենախոսություն պաշտպանել է 6-ը (աղյուսակ 2.4):

Զգալի աշխատանք է կատարվում նաև ասպիրանտուրայի նախկին շրջանավարտների և հայցորդների հետ: 11 ասպիրանտ և հայցորդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Ասպիրանտուրայի արդյունավետությունն ըստ ուսուցման համակարգերի՝ առկա, հեռակա (անվճար և վճարովի հիմունքներով), համապատասխանաբար կազմել է 33,3% (նախորդ տարվա 93,8%-ի փոխարեն), 25,0%, 0%: Որոշ ամբիոնների համար ասպիրանտուրան դեռևս չի դարձել կադրերի համալրման միջոց, ինչը բացատրվում է ապագա ասպիրանտների ընտրության ոչ ճիշտ քաղաքականությամբ, ամբիոններում՝ ասպիրանտների հետ կատարվող անբավարար աշխատանքով:

Հետազոտողի կրթական ծրագրի երկրորդ տարվա ուսումնական պլանի համաձայն՝ ամբիոնների կողմից մշակվել և հաստատման են ներկայացվել առարկայական ծրագրեր, որոնցով ասպիրանտների և հայցորդների համար կազմակերպվել և անցկացվել են մի շարք դասընթացներ. «Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաները կրթական և հետազոտական գործընթացներում», «Նախագծերի մշակում և կառավարում», «Տնտեսագիտության տեսության ժամանակակից հիմնախնդիրները» և այլն:

Վերոնշյալ դասընթացներն ավարտվել են քննությամբ կամ ստուգարքով: Բոլոր ասպիրանտներն ու հայցորդները այդ առարկաներից վաստակել են բարձր միավորներ:

Կազմակերպվել են նաև որակավորման քննություններ «Փիլիսոփայություն», «Օտար լեզու» առարկաներից, ստուգարք՝ «Ինֆորմատիկա» առարկայից, ինչպես նաև որակավորման քննություններ մասնագիտական առարկաներից (որակավորման քննություն-1 և որակավորման քննություն-2): Հաստատվել են նաև հետազոտական փորձառության ծրագրերը:

Համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 014 մասնագիտական խորհրդում 2012 թվականին կազմակերպվել է 48 ատենախոսության հրապարակային պաշտպանություն (այդ թվում՝ 3 դոկտորական ատենախոսություն), որից 2-ը կամ 4,2%-ը՝ «Տեսական տնտեսագիտություն» (Ը.00.01), 12-ը կամ 25,0%-ը՝ «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» (Ը.00.02), 26-ը

կամ 54,2%-ը (այդ թվում՝ 3 դոկտորական ատենախոսություն)՝ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» (Ը.00.03), 6-ը կամ 12,5%-ը՝ «Հաշվապահական հաշվառում և վիճակագրություն» (Ը.00.05), 1-ը կամ 2,1%-ը՝ «Տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում» (Ը.00.08) մասնագիտություններով, իսկ 1-ը կամ 2,1%-ը՝ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» (Ը.00.03) և «Հաշվապահական հաշվառում և վիճակագրություն» (Ը.00.05) մասնագիտություններով (աղյուսակ 2.5):

Հաշվետու տարում ՀՀ ԲՈԿ-ի կողմից 1 գիտությունների դոկտոր, դոցենտ ստացել է պրոֆեսորի, իսկ 15 գիտությունների թեկնածու, ասիստենտ՝ դոցենտի գիտական կոչումներ: 1 տնտեսագիտության թեկնածու, դոցենտի ՀՀ ԲՈԿ-ը թույլատրել է նշանակելու ատենախոսությունների գիտական ղեկավար:

2.4. Գրադարանային սպասարկումը

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, գիտական հետազոտությունների աջակցության գործում էական դերակատարում է հատկացված գրադարանին:

Գրադարանի հիմնական խնդիրներն են.

- ուսումնական, գիտահետազոտական և դաստիարակչական աշխատանքներին աջակցելը,
- ստեղծվող և առաջարկվող գրադարանային-տեղեկատվական արտադրանքի և ծառայությունների որակի բարձրացումը,
- գրադարանային ծառայությունների մատչելիության, հարմարավետության և կազմակերպման տեխնոլոգիական նոր հնարքների ու մեթոդների օգտագործումը:

2012 թվականի ընթացքում գրադարանը համալրվել է 1030 կտոր գրականությամբ՝ հայերենով և ռուսերենով (145 անուն):

Նույն թվականի սեպտեմբերից գրադարանի ընթերցող է դարձել 1370 ուսանող, շարունակվում է հեռակա ուսուցման համակարգի ուսանողների գրանցումը:

Ընթերցողների թիվն առ այսօր 6200 է: Ընթերցասրահների սպասարկումը կազմել է 36.5 հազար, բաժանորդային սպասարկումը՝ ավելի քան 46 հազար: Ընդհանուր առմամբ՝ ավելի քան 82 հազար սպասարկում:

Գործընթացի մեջ է գրադարանի շտեմարանի թվայնացումը: Էլեկտրոնային քարտադարանի տվյալների բազան (3510 անուն) պարբերաբար համալրվում է ձեռք բերված նոր գրականության ցանկով, որը հնարավորություն է ընձեռում փնտրելու գրադարանում առկա անհրաժեշտ գրքերը՝ ըստ հեղինակների, ըստ վերնագրերի և ըստ թեմատիկայի:

Գրադարանն այս տարի բաժանորդագրությամբ ստացել է 17 անուն թերթ (1632 օրինակ) և ամսագիր 40 (182 օրինակ):

Գրադարանային գործունեության բնագավառում առկա հիմնախնդիրներից են գրադարանի ինֆորմատիզացման ցածր տեմպերը, գրականության թարմացման ոչ բավարար մակարդակը, ոչ պիտանի գրքերի գույքագրման ու դուրսգրման աշխատանքների դանդաղ ընթացքը:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Միջազգային գործունեությունը համալսարանի գիտակրթական ներուժի հզորացման կարևոր գործոններից է: Համալսարանում եվրոպական և այդ ճանապարհով համաշխարհային կրթական տարածության մեջ ինտեգրվելու գործընթացը դիտարկվում է ոչ որպես տուրք միտումներին, այլ որպես գլոբալ նպատակ, որին հասնելու ուղին խարսխվում է հետևյալ գերակայությունների վրա.

- համաձայն Հայաստանի Հանրապետության ընդհանուր ռազմավարության՝ համալսարանի ինտեգրում եվրոպական կրթական տարածքում,
- արտասահմանցի գործընկերների հետ համալսարանի կրթական, գիտական, մշակութային կապերի զարգացում,
- ակադեմիական և ուսանողական շարժունության ընդլայնում,
- կրթական ծառայությունների արտահանում,
- համալսարանի դասախոսներին, աշխատակիցների և ուսանողներին միջազգային գործունեության հետ կապված սպասարկման ծառայությունների տրամադրում,
- արտաբյուջետային միջոցների ներգրավում՝ միջազգային գործունեության բնագավառում տարբեր նախագծերի իրացման հաշվին:

Միջազգային կապերը համալսարանին հնարավորություն են ընձեռում.

- մասնակցելու միջազգային ակադեմիական փոխանակումներին, որոնք մրցունակություն են ապահովում մասնագետների պատրաստման բարձր որակի համար պայքարում և նպաստում են տարբեր երկրների ժողովուրդների մերձեցմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը, բաց հասարակության և ժողովրդավարության ձևավորմանը, համամարդկային ու մշակութային արժեքների մեծեցմանը,
- փոխհատուցման հենքով լրացուցիչ միջոցների ստացում՝ արտասահմանցի ուսանողների, ասպիրանտների ուսումնառության հաշվին,

- ստանալու անհրաժեշտ գիտատեխնիկական տեղեկատվություն՝ ուսումնական գործընթացում և գիտական հետազոտություններում օգտագործելու համար,
- ներգրավելու միջազգային հիմնադրամների, կազմակերպությունների և ծրագրերի միջոցները համալսարանի զարգացման համար:

3.1. Արտասահմանյան գործընկերների հետ համալսարանի կրթական, գիտական, մշակութային կապերի զարգացումը

Ջարգանում են գործընկերային հարաբերությունները 10 երկրների շուրջ 20 բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ համալսարանի բակալավրիատի, մագիստրատուրայի ուսանողների կրթությունն այդ բուհերում շարունակելու, դասախոսների վերապատրաստման և այլ ուղղություններով:

Աղյուսակ 3.1

ՀՊՏՀ համագործակցության աշխարհագրությունը

| Երկիրը | Գործընկերները |
|----------|---------------|
| ՌԴ | 6 |
| Ուկրաինա | 5 |
| Վրաստան | 3 |
| Լատվիա | 1 |
| Սլովակիա | 1 |
| Չեխիա | 1 |
| Ֆրանսիա | 1 |
| ԱՄՆ | 1 |
| Կիպրոս | 1 |

Ակնհայտ է, որ համալսարանի առջև դրված միջազգայնացման խնդիրների հաջող լուծման համար կպահանջվի ընդլայնել միջազգային համագործակցության աշխարհագրությունը:

3.2. Ակադեմիական և ուսանողական շարժունության ընդլայնում

Ուսանողների, դասախոսների և հետազոտողների ակադեմիական շարժունությունը Բոլոնիայի գործընթացի կարևոր բաղադրիչ-

ներից է, յուրաքանչյուր համալսարանի միջազգայնացման կարևոր գործոնը:

Այն նպաստում է կրթական ծրագրերի և հետազոտությունների որակի բարձրացմանը: Շարժունությունը կարևոր է նաև անհատի անձնային զարգացման և ապագա կարիերայի հնարավորությունների ընդլայնման տեսանկյունից:

Համալսարանի սահմանափակ թվով ուսանողներ և դասախոսներ են ուսումնառել կամ իրենց որակավորումը բարձրացրել արտասահմանյան բուհերում: Փաստորեն, այդ գործընթացները դանդաղ են ընթանում, իսկ արդյունքները դեռևս շոշափելի չեն: Ուսումնասիրությունները վկայում են, որ այդպիսին է վիճակը ՀՀ գրեթե բոլոր բուհերում: Այս պարագայում խոսքն ավելի շուտ հաջորդ կրթական մակարդակում ուսումը շարունակելու նպատակով դեպի դուրս ուղղված «ուղղահայաց» կամ «որակավորման» շարժունության մասին է, ինչը պարարտ հող է «ուղեղների արտահոսքի» համար: Համալսարանում ակադեմիական շարժունության բնագավառում շոշափելի հաջողությունների բացակայությունը վկայում է արդեն իսկ առկա միջազգային համագործակցության ծրագրերի ու համաձայնագրերի իրականացման ցածր մակարդակի մասին: Այս առումով մեծ աշխատանք կա անելու ֆակուլտետներում և ամբիոններում, ուսանողների շրջանում:

Հատկապես պետք է կարևորել ուսանողների շարժունության հնարավորությունները բոլոր մակարդակի կրթական ծրագրերի կառուցվածքներում նախատեսելը և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի համար մինչև 2020 թ. ուսանողների շարժունության մակարդակն առնվազն 20%-ի հասցնելու վերաբերյալ Եվրամիության սահմանած նպատակին համահունչ գործողություններ ձեռնարկելը:

3.3. Կրթական ծառայությունների արտահանում

Միջազգային գործունեության բնագավառում վերոնշյալ գերակայությունները պայմանավորված են ամենից առաջ այն հանգամանքով, որ այդպիսին է եղել կրթական ծառայությունների շուկա ներթափանցած աշխարհի բազմաթիվ համալսարանների ուղին, այդպիսի քայլեր են ձեռնարկում Հայաստանի որոշ համալսարաններ:


Եթե 20-30 տարի առաջ աշխարհում, առավել ևս հետխորհրդային երկրներում ոչ ոք չէր խոսում այն մասին, որ կրթությունը շուկա է, ապա այժմ փոխվում են նաև սահմանումները: Մասնագիտական գրականության մեջ երևան են եկել նոր եզրեր, որոնք սահմանում են համալսարանի դերը ժամանակակից փուլում: Օրինակ, Եվրոպայում դա հնչում է որպես ձեռնարկատիրական համալսարան (university-entrepreneur) կամ ԱՄՆ-ում՝ ակադեմիական ձեռնարկություն (academic enterprise): Եթե կրթությունը շուկա է, ապա կարելի է խոսել ամենից առաջ կրթական ծառայությունների մասին, ինչը դառնում է ցանկացած կրթական հաստատության առավել եկամտաբեր հատվածներից: Այսպես, Եվրոպայում այդ շուկայում տարեկան շրջանառությունը կազմում է շուրջ 40 մլրդ դոլար: Հայաստանի համալսարաններում նույնպես բազմաթիվ են արտասահմանցի ուսանողները: Ընդ որում, առաջատարը, ուսանողների թվաքանակով, Հերացու անվան բժշկական համալսարանն է: Ավանդաբար, արտասահմանցի քաղաքացիները ցանկություն են հայտնում Հայաստանում ձեռք բերել բնագիտական, բժշկական մասնագիտություններ: Տարեցտարի աճում է ՀՀ կրթական ծառայությունների արտահանման ծավալը: Այսպես, 2008 թ. համեմատ՝ 2011 թ. կրթական ծառայություններն աճել են 1.3 անգամ: Միաժամանակ, կրթական ծառայությունների ներմուծումն աճել է 1.6 անգամ (գծանկար 3.1): Արտահանման ծավալի դրական միտումը վկայում է, որ մեր համալսարաններն աստիճանաբար բարելավում են իրենց մրցակցային առավելությունները, իսկ ներմուծման ծավալի աճը փաստում է, որ մեծանում է արտասահմանյան առաջավոր համալսարաններում սովորելու մեր երիտասարդության ձգտումը: Շնորհիվ նրանց՝ որոշ չափով կհամալրվի մեր համալսարանների դասախոսական համակազմը՝ նպաստելով նաև կրթական ծառայությունների որակի ու մրցունակության բարձրացմանը, հետևաբար՝ արտահանման ներուժի մեծացմանը:

Բարձրագույն տնտեսագիտական կրթության երեք աստիճաններում մասնագետներ պատրաստող մեր համալսարանների նվաճումները դեռևս համեստ են: Այստեղ կան շուկայական մեծ հնարավորություններ, որոնցից պետք է օգտվել: Այսպես, արտասահմանում սովորողների 25%-ն ընտրում է բիզնես կրթությունը: Հա-

մաշխարհային շուկայի տարողությունը մոտավորապես 12-13 մլրդ դոլար է:

Նկատի ունենալով վերոնշյալը, ինչպես նաև կրթական ծառայությունների բազմազանեցման և համալսարանի միջազգայնացման անհրաժեշտությունը՝ այդ ուղղությամբ ձեռնարկվել են որոշ քայլեր:

2012 թվականի հուլիսին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը համալսարանին թույլատրեց օտար լեզվով կազմակերպել արտասահմանյան քաղաքացիների ուսուցումը: Սա, կարելի է ասել, պատմական նշանակության ձեռքբերում էր համալսարանի համար:



Գծանկար 3.1. Կրթական ծառայությունների արտահանումը և ներմուծումը ՀՀ-ում

2012-2013 ուստարում, տնտեսագիտական մասնագիտությամբ, ՀՊՏՀ-ն առաջինը սկսեց Հնդկաստանից ու Նեպալից քաղաքացիների ընդունելությունը, ինչը նոր հնարավորություններ է ստեղծում համալսարանի համար: Այստեղ հարցը միայն եկամուտների դիվերսիֆիկացումն ու դրանց մեծացումը չէ: Ավելի կարևոր է այդ ուղղությամբ միջազգայնացման գործընթացը և այն, որ աշխուժություն է նկատվում մեր դասախոսների շրջանում, կրթական ծառայությունների որակի նոր, ավելի բարձր նշանով է սահմանվում, ինչը որոշակիորեն կնպաստի համալսարանի մրցունակության

բարձրացմանն ու նրա դրական համբավի ձևավորմանը մեր երկրում և արտասահմանում:

Սիրիայի հայտնի իրադարձությունների պատճառով մեր համալսարանում իրենց ուսումը շարունակելու են մեր մի քանի հայրենակիցներ, որոնցից հայերենի տիրապետողներն ընդգրկվեցին հայերենով դասավանդվող խմբերում, իսկ չտիրապետողների համար կազմակերպվել է անհատական ուսուցում:

Մեր մի քանի տասնյակ հայրենակիցներ Ռուսաստանից, Ուկրաինայից, Վրաստանից ընդունվել են համալսարան և հաջողությամբ ինտեգրվել իրենց համար նոր միջավայրում:

Աղյուսակ 3.2

ՀՊՏՀ-ում սովորող արտասահմանցի քաղաքացիների թվաքանակը՝ ըստ երկրների

| Երկիրը | Ուսանողների թվաքանակը |
|-----------|-----------------------|
| Վրաստան | 111 |
| ՌԴ | 11 |
| Հնդկաստան | 8 |
| Սիրիա | 5 |
| ԱՄՆ | 2 |
| Նեպալ | 2 |
| Լիտվա | 1 |
| Ուկրաինա | 1 |

Խնդիրները

1. **Կադրային.** Համալսարանի դասախոսների և աշխատակիցների մեծ մասը չունի լեզվական բավարար պատրաստվածություն:
2. Ֆակուլտետների և ամբիոնների մակարդակում միջազգային գործունեության ռազմավարական պլանավորման բացակայություն:
3. Ուսումնառության համար արտասահմանյան քաղաքացիների հավաքագրման հիմնախնդիրներ (թույլ են ուսումնասիրված կրթական ծառայությունների հավանական շուկաները, բացակայում է երկրի համալսարանների սերտ համագործակցությունը կրթական ծառայությունների արտահանման

հարցում, բացակայում են կրթական ծառայությունների արտահանման ազգային մոդելները):

4. Արտասահմանյան ուսանողների համար դեռևս չկան հանրակացարանային բավարար պայմաններ:
5. **Ակադեմիական և ուսանողական շարժունության զարգացման ոչ բավարար մակարդակը** (պրոֆեսորադասախոսական և ուսանողական համակազմի լեզվական ցածր պատրաստվածությունը, դրամաշնորհների հայտերի պատրաստման թույլ կարողությունը):
6. **Արտասահմանում համալսարանի աշխատակիցների գիտական աշխատանքների հայտնիության ցածր մակարդակը** (ներկայացուցչական միջազգային համաժողովներին մասնակցության, արտասահմանյան հայտնի հրատարակություններում հրապարակման ֆինանսավորման բացակայությունը), ինչը խանգարում է համաշխարհային գիտական և կրթական տարածություն ներթափանցելուն:
7. **Գիտահետազոտական աշխատանքների առևտրայնացման փորձի բացակայությունը** (ներքին և արտաքին շուկաներում պահանջարկ ունեցող ԳՀԱ-ների վերջնական արդյունք ստեղծելու՝ գիտական աշխատակիցների անկարողությունը):

Միջազգային համագործակցության զարգացմանը խոչընդոտող այս և բազմաթիվ այլ հիմնախնդիրների լուծման համար կուժեղացվի արտաքին կապերի բաժինը, կամրապնդվեն թեկուզև համեստ ձեռքբերումները, կձեռնարկվեն մի շարք միջոցառումներ՝ համալսարանի միջազգայնացման գործընթացների արդյունավետության բարձրացման և արագացման նպատակով:

4. ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Արդեն մեկ տարի է, բուհում ստեղծվել է լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժին: «Տնտեսագետ» ամսագրի խմբագրության հենքի վրա ստեղծված բաժինը բոլորովին նոր գործառույթներ ու նպատակներ է հետապնդում:

Բաժինն իր աշխատանքներն ու գործառույթներն իրականացնում է 4 հիմնական ուղղություններով՝

- «Տնտեսագետ» ամսագրի լույս ընծայում,
- բուհի պաշտոնական կայքի (asue.am) սպասարկում,
- «Facebook» սոցիալական ցանցում բուհի պաշտոնական էջի սպասարկում,
- զանգվածային լրատվամիջոցների հետ աշխատանքների իրականացում, հանրային կապերի ստեղծում և զարգացում:

Այս ծավալուն աշխատանքն իրականացվում է թերթի խմբագրության՝ գրեթե նույն կադրային ռեսուրսներով: Նախկինում միայն գունավոր շապիկով, բայց սև ու սպիտակով տպագրվող «Տնտեսագետ» ամսագիրը, որը բուհի շրջանակներում տարածվում էր 60 դրամով, դարձավ ամբողջությամբ գունավոր, տպագրական և ձևավորման նոր որակով, երկամսյա և այժմ տարածվում է անվճար: Պահպանելով ամսագրիի նախկին ավանդույթները, ներմուծվել են նոր խորագրեր, ընդգրկվել են նոր հեղինակներ, լայնացել է թեմատիկ ընդգրկումը, այսօր այն բավական բազմազան է:

2012 թվականի դեկտեմբերի 5-ին համալսարանի նիստերի սրահում մեծ շուքով նշվել է «Տնտեսագետի» 35-ամյա հոբելյանը: Ամսաթերթի հոբելյանի առիթով շնորհավորանքի խոսք է հղել նաև բուհի խորհրդի նախագահ, ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը:

Անցած մեկ տարում հատուկ պատվիրվել է բուհի պաշտոնական asue.am կայքը, որը նոր դիզայնով, ամբողջությամբ նոր տեղեկատվությամբ, հանդիսավոր արարողությամբ պաշտոնապես բացվել է 2011թ. դեկտեմբերի 27-ին՝ համալսարանի խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանի մասնակցությամբ կայացած միջոցառմանը: Կայքը գործարկումից ի վեր հարստացվել է նոր խորա-

գրերով և տեղեկատվությամբ, գրեթե ամենօրյա աշխատակարգով ներկայացվում են բուհական անցուդարձին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ, նորություններ, հայտարարություններ, որոնցով ապահովվում է անհրաժեշտ տեղեկատվություն ուսանողների, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի, ինչպես նաև հասարակության լայն զանգվածների համար: Կայքն ապահովում է լրատվություն՝ ներկայացնելով ոչ միայն բուհական միջոցառումները, այլև այն ամբողջ հարցերի շրջանակները, որոնք հետաքրքրում են մեր գործընկերներին, ուսանողներին: Համալսարանի պաշտոնական կայքում արտացոլվում են բուհի կառուցվածքային, ուսումնական, գիտական կյանքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները: Կայքն ունի բազմաթիվ խորագրեր, որոնք ամբողջական պատկերացում են տալիս բուհի, բուհում ընթացող զարգացումների մասին:

2011թ. նոյեմբերի 11-ին «Facebook» սոցիալական ցանցում բացվել է նաև համալսարանի պաշտոնական էջը, որտեղ ևս ներկայացվում է բուհական կյանքին վերաբերող լրատվություն: Այն ևս ծառայում է ամենօրյա լրատվության ապահովման համար, սակայն ի տարբերություն բուհի պաշտոնական կայքի, այստեղ պաշտոնական տեղեկատվությունից բացի, աշխատանքային օրվա ավարտից հետո՝ երեկոյան, ներկայացվում է մշակույթ՝ բարձրարժեք ֆիլմերի, երաժշտության, նկարների, արժեքավոր գրքերի տեսքով, որոնք անմիջականորեն չեն կապվում բուհի հետ, բայց կարող են հետաքրքրություն ներկայացնել ուսանողության համար: «Facebook»-ում բուհի պաշտոնական էջն ունի հետադարձ կապի լայն հնարավորություն, այսինքն՝ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն ամենօրյա իր աշխատանքային օրակարգում մեծ տեղ է հատկացնում այս էջի հասցեով ստացված և այս էջում հրապարակված նյութերի տակ եղած մեկնաբանություններին, հարցերին ու մտահոգություններին արձագանքելու գործին: Մեկ տարի անց բուհի ֆեյսբուքյան պաշտոնական էջն արդեն ունի ավելի քան 4000 օգտատեր:

Նոր որակի աշխատանք է իրականացվում լրատվամիջոցների հետ աշխատանքի, հանրային կապերի՝ ավելի հայտնի PR-ի ուղղությամբ: Բաժնի ստեղծումից ի վեր՝ կապեր են հաստատվել

տասնյակ լրատվական կայքերի, թերթերի, հեռուստաընկերությունների հետ, որոնցում ոչ միայն լայնորեն լուսաբանվում են համալսարանում տեղի ունեցող իրադարձությունները, այլև բուհի ներկայացուցիչները հանդես են գալիս հարցազրույցներով, ասուլիսներով, հեղինակային հրապարակումներով: Այս ամենին զուգահեռ՝ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինն իրականացնում է բուհի PR-ը, այսինքն՝ զբաղվում է նրա կերպարի դրական հանրայնացմամբ:

Ամենօրյա աշխատակարգով բաժինը հետևում է տպագիր մամուլում, ինչպես նաև էլեկտրոնային լրատվամիջոցներում ինչպես կրթության ոլորտին, այնպես էլ հատկապես մեր բուհին վերաբերող հրապարակումներին, վերլուծում, անհրաժեշտության դեպքում հանդես գալիս հայտարարություններով, պարզաբանումներով: Լրատվական բաժինը պատասխանում է լրատվամիջոցների այն հարցերին, որոնք վերաբերում են բուհին, նրանց տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն, հանդես գալիս պատասխան հրապարակումներով, անհրաժեշտության դեպքում՝ հերքումներով, կազմակերպում մամուլի ասուլիսներ կամ ընդունում ասուլիսների և հարցազրույցների հրավերներ:

Բուհի PR-ն իրականացվում է նաև բուհական իրադարձությունների մասին լուսաբանում ապահովելով: Բուհական առանցքային միջոցառումների ժամանակ բաժինը լրատվամիջոցներին է ուղարկում միջոցառման անոնս-հրավերը, մամուլի հաղորդագրություններ պատրաստում բուն միջոցառման ժամանակ լրատվամիջոցներին ներկայացնելու համար, ապա միջոցառումից հետո կրկին լրատվամիջոցներին է ուղարկում իրադարձության մասին անհրաժեշտ հաղորդագրություն և լուսանկարներ: Բոլոր իրադարձությունների մասին լուսաբանումները ներկայացվում են բուհի պաշտոնական կայքի «ՀԼՄ-ները մեր մասին» ենթախորագրի ներքո: Բաժնի ստեղծումից ի վեր զանգվածային լրատվամիջոցներով համալսարանի մասին հրապարակումների քանակն անցնում է հարյուրի սահմանը:

Փոփոխությունների փուլ թևակոխած մեր բուհը կայուն հաստատվում է համացանցում, լայնորեն լուսաբանվում լրատվամիջոցներում: Այսօր բուհի մասին թարմ տեղեկատվության կա նաև

Վիկիպեդիայում, Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում: ՀՊՏՀ պաշտոնական կայքը գրանցվել է «Գուգլ անալիտիկա» և «Սըրքըլ» (circle.am) վարկանշային կայքերում, որով ամենօրյա ռեժիմով հետևում ենք մեր կայքի այցելություններին՝ արձանագրելով կայուն աճ: «Սըրքըլ»-ի «Կրթություն և գիտություն» խորագրի ներքո համալսարանի՝ ընդամենը մեկ տարվա կյանք ունեցող պաշտոնական կայքը արագորեն մտել է առաջին տասնյակ և հիմնականում «տեղաշարժվում է» 1-15-ի միջակայքում, իսկ 2012թ. հուլիսի 10-ին այն առաջին անգամ մտավ վարկանշային կայքերի առաջին հնգյակ: Զուտ բուհական կայքերի վարկանշային սանդղակում մեր բուհի կայքը տեղաշարժվում է 1-3-րդ հորիզոնականներում:

5. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի ռեկտորատի, արհկոմիտեի, ֆակուլտետների, դեկանատների, ամբիոնների, ուսանողական խորհրդի, «Տնտեսագետ» ամսագրի գործունեության հիմքում ուսանողության ուսումնադաստիարակչական խնդիրներն են:

Անցած մեկ տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը շարունակել է իր շուրջը համախմբել ուսանողներին, ովքեր հասարակական գործունեություն են ծավալել ինչպես բուհում, այնպես էլ բուհից դուրս՝ բարձր պահելով բուհի պատիվը: Կազմակերպվել են օլիմպիադաներ, տնտեսագիտական ուսանողական գիտաժողովներ, մարզական և մշակութային միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր, «Ոսկե աշուն», «Ուսանողական գարուն» ավանդական դարձած մրցույթ-փառատոնները, բանավեճեր, այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր և թանգարաններ: Ուսանողներն ակտիվորեն մասնակցել են նաև հայրենասիրական ծրագրերին. ՀՀ պաշտպանության նախարարության հետ համատեղ պարբերաբար այցելել են տարբեր զորամասեր, սահմանային գոտիներ:

Ուսանողական խորհուրդը հաճախ իրագործում է սոցիալական ծրագրեր՝ այցելություններ մանկատներ, ծերանոցներ և այլն: Չեն անտեսվել նաև կարիքավոր ուսանողների խնդիրները. սույն թվականի մարտին ՀԵՀ-ի հետ համատեղ իրականացվել է մոտ 100 ուսանողի վարձի մասնակի փոխհատուցում: Որոշակի մասնակցություն է ունեցել նաև կրեդիտային համակարգի ներդրման աշխատանքներին: Պարբերաբար իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ՝ ուսանողությանը հետաքրքրող հարցերի շուրջ:

Հաշվետու տարում Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում կազմակերպվել է «Ուսանողական ամառ-2012» մրցույթ-փառատոնը: Շարունակվել է լույս ընծայվել «Էկոնոմ plus» ամսաթերթը՝ ամբողջությամբ նոր դիզայնով: Պարբերաբար թարմացվել է ուսանողական խորհրդի կայքը, ինչպես նաև՝ ֆեյսբուքյան էջը:

Համալսարանի ուսանողները փայլուն մասնակցություն են ունեցել «Բազե-2012» երիտասարդական հավաքին և վերադարձել են

հաղթանակով, որին ներկա է եղել նաև ՀՀ նախագահը:

Սույն թվականի փետրվարին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կազմակերպած Հայկյան մրցանակաբաշխության ժամանակ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհուրդը պարգևատրվել է «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում: Պարգևը հանձնել է ՀՀ վարչապետը:

Ուսանողական խորհուրդը շարունակել է կազմակերպել ավանդույթ դարձած ևս մի քանի միջոցառումներ՝ «Ալո, փնտրում ենք տաղանդներ» համերգային ծրագիրը, «ՀՊՏՀ գավաթ-2012» միջբուհական ինտելեկտուալ փառատոնը: Ֆիզդաստիարակության ամբիոնի հետ համատեղ կազմակերպել է մարզական մի շարք խաղեր: Կազմակերպվել է նաև «Անկախ տնտեսության 20 տարիները» ուսանողական գիտաժողովը, որի ավարտին տպագրվել է նյութերի ժողովածու: Գիտաժողովին դասախոսությամբ հանդես է եկել նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Հաշվետու տարում ուսանողական խորհրդի հրավերով Հայաստան է եկել Եվրոպայի ուսանողական միության պատվիրակությունը և հանդիպումներ ունեցել ռեկտոր Կորյուն Աթոյանի ու ուսանողական խորհրդի հետ:

Զգալի ձեռքբերումներ են եղել միջազգային համագործակցության համատեքստում. տարվա ընթացքում մոտ 15 ուսանող այցելել է Եվրոպական հեղինակավոր համալսարաններ և տեղում ծանոթացել կրթական ծրագրերին և ուսանողական ինքնակառավարմանը: Ուսանողական խորհրդի ջանքերով մոտ 10 ուսանողի գիտական հոդվածներ տպագրվել են տարբեր միջազգային ամսագրերում:

Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի աշխատանքներին:

2012 թվականի դեկտեմբերի 14-ին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցած ինտելեկտուալ խաղերի միջբուհական առաջնությունում համալսարանի «Ինդեքս-Պրո» գիտակների թիմը նվաճել է հաղթողի կոչում:

Համալսարանում բարելավվել է ֆիզդաստիարակության ուսումնական գործընթացը: Ակտիվացել են նաև մարզական աշխատանքները և համալսարանի թիմերի մասնակցությունը տարբեր մրցումներին և մարզական խաղերին:

Այս տարի ևս մեծ ոգևորությամբ և մասսայական հագեցվածությամբ են անցել համալսարանի ներֆակուլտետային «Ուսանողական աշուն» մարզական միջոցառումները: Հատկապես աչքի են ընկել մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, հաշվապահական հաշվառման և աուդիտի ու ֆինանսական ֆակուլտետների մարզիկ-մարզուիիները:

Համալսարանի առանձին մարզաձևերի հավաքական թիմերը լավ են հանդես եկել նաև հանրապետական տարբեր մրցումներում և ուսանողական խաղերում: Աչքի են ընկել սեղանի թենիսիստները, ֆուտբոլիստները շախմատիստները և հանդբոլիստները, ովքեր դարձել են չեմպիոններ և մրցանակակիրներ՝ արժանանալով նաև համալսարանի ռեկտորատի խրախուսանքին և դրամական պարգևներին:

Համալսարանն ակտիվորեն մասնակցել է նաև Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի կողմից կազմակերպվող մարզական-մասսայական միջոցառումներին՝ օլիմպիական օրվան նվիրված վազքարշավին և ՀՀ անկախության 21-ամյակին նվիրված հանրապետական ուսանողական առաջնություններին:

Ֆիզդաստիարակության ամբիոնի առանձին աշխատակիցներ հասարակական ակտիվ աշխատանքներ են կատարել և ակտիվորեն մասնակցել հանրապետությունում իրականացվող մարզական և ֆիզկուլտ-մասսայական տարբեր միջոցառումներին:

Մարզական կյանքը բուռն է եղել նաև Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում, որտեղ, բացի տուրիստական արշավներից և էքսկուրսիաներից, ամեն հերթափոխում կազմակերպվել և անցկացվել են սպարտակիադաներ ու մրցումներ:

6. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

2012 թվականին համալսարանը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հայտարարված ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերի մրցույթում հաղթող է ճանաչվել «Քաղաքաշինություն» և «Համակարգչային հմտություններ» ծրագրերով:

2012 թվականի ընթացքում շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնում (այսուհետ՝ կենտրոն) ՀՀ քաղաքացիական ծառայողների որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցել և վերապատրաստվել է 511 ՀՀ քաղաքացիական ծառայող, որից 138-ը՝ գլխավոր և բարձրագույն, իսկ 373-ը՝ առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներ:

Կենտրոնում ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը կատարվել է 15 խմբով, որից 2 խումբը վերապատրաստվել է «Քաղաքաշինություն», իսկ 13-ը՝ «Համակարգչային հմտություններ» ծրագրերով:

Վերապատրաստման ծրագրերը հաստատված են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներով: Կենտրոնում դասավանդել են համալսարանի դասախոսներ, ինչպես նաև համապատասխան նախարարություններից և գերատեսչություններից հրավիրված մասնագետներ (15 դասախոս):

2012 թվականի ընթացքում կենտրոնի կողմից կազմակերպվել են «Հաշվապահական հաշվառում և տնտեսական օրենսդրության հիմունքներ» ծրագրով դասընթացներ (մարտի 5-ից մինչև ապրիլի 23-ը՝ ընդհանուր 50 ժամ տևողությամբ), որոնց մասնակցել է 12 հոգի:

Հաշվետու տարում կազմակերպվել են նաև անգլերենի դասընթացներ՝ 2 փուլով: Առաջին փուլի դասընթացներին (հունվարի 16-ից մինչև մայիսի 8-ը՝ ընդհանուր 225 ժամ տևողությամբ) մասնակցել է 51 հոգի:

Երկրորդ փուլի դասընթացները (մասնակցել է 16 հոգի, 225 ժամ տևողությամբ), որոնք կազմակերպվել են օտար լեզուների ամբիոնի հետ համատեղ, սկսվել են հոկտեմբերի 15-ին և ավարտվել դեկտեմբերի 22-ին:

7. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի բոլոր մասնաշենքերում 2012-2013 ուսումնական տարվա նախապատրաստման հետ կապված՝ կատարվել են մի շարք ընթացիկ և կապիտալ շինարարական վերանորոգման աշխատանքներ: Լսարաններում, աշխատասենյակներում, միջանցքներում և աստիճանավանդակներում կատարվել են կոսմետիկ և ընթացիկ շինարարական վերանորոգման աշխատանքներ:

Քաղաքապետարանի կողմից ՄԱԿ-ի ներկայացրած «Գեղեցիկ Երևան» ծրագրի հետ համատեղ համալսարանն իրականացրել է բակի տարածքի վերակառուցում, այն դարձել է կանաչապատ հանգստի գոտի: Մասնաշենքերի դրսի պատերը հարթեցվել են և ներկվել ջրակայուն ներկով: Կառավարման և ֆինանսական ֆակուլտետների ճակատային պատուհանները փոխվել են եվրոպատուհաններով:

Բոլոր ֆակուլտետների մասնաշենքերում կատարվել են հիմնական և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի մասնաշենքում հիմնանոգվել են նաև 2 վերելակները: Ֆինանսական ֆակուլտետի մասնաշենքում ՊԵԿ-ի ուժերով հիմնանորոգվել և կահավորվել է 3 լսարան:

5-րդ մասնաշենքի համակարգչային սրահներում անցկացվել են հոսանքի և համացանցի նոր գծեր, տեղադրվել է 8 օդորակիչ: Սերվերներ տեղադրելու համար մետաղապլաստե պրոֆիլներով առանձնացվել է հատուկ հատված:

Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի մասնաշենքում արտասահմանցի ուսանողների պարապմունքները կազմակերպելու նպատակով ամբողջությամբ հիմնանորոգվել է 3-րդ հարկը: Վերանորոգվել է շենքի նկուղային հարկի մարզադահլիճը, նորացվել է փողոցից տարածք մտնող խմելու ջրագիծը:

Համալսարանի տրանսֆորմատորային ենթակայանում անցկացվել է հոսանքի մատակարարման 2-րդ լրացուցիչ հոսանքագիծը և այնտեղ տեղադրվել է հոսանքի գծերի լարման փոփոխման համակարգ:

Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում կատարվել են ընթացիկ և կոսմետիկ շինարարական վերանորոգման աշխատանքներ:

Սկսվել են կենտրոնական մասնաշենքի ճաշարանի վերանորոգման և նոր գույքի ձեռք բերման աշխատանքները:

Լսարաններում և աշխատասենյակներում գույքը նորացվել է:

Կատարված նախագծանախահաշվային աշխատանքների հիման վրա նախկին «Տնտեսագետ» հրատարակչության տարածքում սկսվել են շինարարական աշխատանքները:

8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

8.1. Գյումրու մասնաճյուղ

Առկա ուսուցման բակալավրիատը կազմակերպվում է 5 մասնագիտություններով՝

1. «Ֆինանսներ»,
2. «Հաշվապահական հաշվառում»,
3. «Կառավարում»,
4. «Միջազգային տնտեսական հարաբերություններ»,
5. «Կոմերցիա»:

Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսուցումը կազմակերպվում է 3 մասնագիտություններով՝

1. «Ֆինանսներ»,
2. «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)»,
3. «Կոմերցիա (այդ թվում՝ «Բիզնեսի կազակերպում»)»:

2011-2012 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում մասնաճյուղում սովորել է 487 ուսանող, այդ թվում՝

- առկա ուսուցման բակալավրիատում՝ 390 ուսանող,
- առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 97 ուսանող:

2012-2013 ուսումնական տարվա առաջին կիսամյակում մասնաճյուղում սովորում է 644 ուսանող, այդ թվում՝

- առկա ուսուցման բակալավրիատում՝ 462 ուսանող,
- առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 138 ուսանող,
- հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 22 ուսանող,
- հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 22 ուսանող:

2012 թվականին առկա ուսուցման բակալավրիատն ավարտել է 94 շրջանավարտ, այդ թվում գերազանցության դիպլոմով՝ 2 հոգի: Առկա ուսուցման մագիստրատուրան ավարտել է 33 շրջանավարտ, այդ թվում գերազանցության դիպլոմով՝ 5 հոգի:

Առկա ուսուցման բակալավրիատի 2011-2012 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 69%, առաջին լուծարքից հետո՝ 74%, 3 ուսանող հեռացվել է ուսման ցածր առաջադիմության պատճառով:

Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը եղել է բարձր՝ 89%, 2 ուսանող հեռացվել է ուսման ցածր առաջադիմության պատճառով:

2012-2013 ուստարվա առաջին կիսամյակի միջանկյալ քննաշրջանից հետո ուսման առաջադիմությունը 55 % է: Առաջին կուրսերի առաջադիմությունը 50% է, իսկ չորրորդ կուրսերինը՝ 60%:

Մասնաճյուղում դասավանդում է 50 դասախոս, որից 6-ը՝ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 22-ը՝ գիտությունների թեկնածու, որից 8-ը՝ դոցենտ: Հաշվետու տարում մասնաճյուղի դասախոսները հրատարակել են 47 գիտական հոդված և 4 ուսումնամեթոդական աշխատանք:

Մասնաճյուղի խորհրդի և ամբիոնների նիստերում պարբերաբար քննարկվել են մայր բուհի գիտական խորհրդի նիստերում կրեդիտային համակարգի փոփոխությունների հետ կապված որոշումները:

Մշտապես վերահսկվել են դասախոսների կողմից իրականացվող ուսումնական և արտալսարանային պարապմունքները: Բոլոր դասախոսներն ապահովված են ուսումնական ծրագրերով և օրացուցային պլաններով:

Յոթ առարկաներից դասախոսություններն անցկացվում են ժամանակակից տեխնիկական միջոցներով:

Նորացվել և արդիականավել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների թեմատիկան, իսկ պաշտպանությունները կազմակերպվել են հիմնականում էլեկտրոնային հավելվածներով:

Դեկանատը և ուսումնական մասը խիստ հսկողություն են սահմանել անհարգելի բացակայությունների հաշվառման նկատմամբ: Համաձայն ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշման՝ 60 ժամից ավելի բացակայություններ ունեցող մի շարք ուսանողներ ստացել են նկատողություն և խիստ նկատողություն:

Ամբիոնների վարիչների և փորձառու դասախոսների կողմից պարբերաբար կատարվում են փոխադարձ դասալուսման, կազմակերպվում են բաց դասեր:

Մասնաճյուղի տնտեսագետ դասախոսները բազմիցս հրավիրվել են տարբեր հեռուստաընկերություններ՝ մասնակցելու մասնագիտական քննարկումների և հարցազրույցների:

Անցած ամիսների ընթացքում տնօրենությունը, դեկանատը և ամբիոնները շարունակել են աշխատանքները կրթական նոր բարեփոխումների և ուսանողների գիտելիքների ստուգման ու գնահատման գործընթացն արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

8.2. Եղեգնաձորի մասնաճյուղ

2012 թվականի ընթացքում Եղեգնաձորի մասնաճյուղի ուսումնագիտական և կազմակերպական գործունեությունը կարելի է համարել ավարտված, քանի որ իրականացվել են նախապես պլանավորված բոլոր գործընթացները: Մասնաճյուղի կրթական ծրագրերը բոլոր մասնագիտությունների գծով ամբողջությամբ համապատասխանեցվել են մայր բուհի ծրագրերին: Քննությունների և ստուգարքների կազմակերպման ընթացակարգերը և դրանց վերաբերող ժամանակացույցերը կազմվել են մայր բուհի կողմից սահմանված չափանիշներին և ժամկետներին համապատասխան:

Մասնաճյուղի ուսումնագիտական և ուսումնադաստիարակչական գործունեության առանձնահատկություններից մեկն այն է, որ 2012 թվականին ներդրվել են հեռակա ուսուցման բակալավրիատի և առկա ուսուցման մագիստրատուրայի կրթական համակարգեր:

2012 թվականին մասնաճյուղը թողարկել է առաջին շրջանավարտները: «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ՝ 11, «Ֆինանսներ» մասնագիտությամբ՝ 9 և «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում») մասնագիտությամբ՝ 6 շրջանավարտներ ստացել են բակալավրի որակավորում, որոնցից մեկը բուհն ավարտել է գերազանց առաջադիմությամբ: Շրջանավարտների մոտ 80%-ը աշխատում է պետական և մասնավոր ոլորտում, որոնց մեծ մասը՝ ֆինանսական հատվածում:

2012 թվականի ընթացքում Եղեգնաձորի մասնաճյուղի աշխատակիցները հրատարակել են 2 մենագրություն և 13 գիտական հոդված:

2012 թվականի ընթացքում մասնաճյուղի գրադարանը նվիրատվությունների հաշվին համալրվել է նոր գրականությամբ:

Եղեգնաձորի մասնաճյուղում 2012-2013 ուսումնական տարվա ընդունելության մրցույթ էր հայտարարված առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրով հինգ մասնագիտությունների գծով՝ «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում»), «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (ըստ ճյուղերի)», «Միջազգային տնտեսական հարաբերություններ»: Յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանվել է ուսման վարձ՝ տարեկան 250.000 դրամ:

Նույն ուսումնական տարվա ընդունելության համար մասնաճյուղին հատկացվել է երեք անվճար տեղ, որից մեկական՝ «Ֆինանսներ», «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում») և «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտությունների համար: 2012 թվականին մասնաճյուղ է դիմել 61 դիմորդ, որի արդյունքում մրցույթային հիմունքներով ընդունվել է 47 ուսանող: Նույն ժամանակահատվածում 1 ուսանող Եղեգնաձորի մասնաճյուղից տեղափոխվել է մայր բուհ:

2012-2013 ուսումնական տարում մասնաճյուղում բացվել են հեռակա ուսուցման բակալավրիատի՝ «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտություններով՝ յուրաքանչյուրին 20-ական տեղ, և առկա ուսուցման մագիստրատուրայի՝ «Հանրային ֆինանսներ» և «Գործարար կառավարում» մասնագիտություններով՝ յուրաքանչյուրին 15-ական տեղ, կրթական ծրագրեր: Հեռակա ուսուցման բակալավրիատի «Կառավարում» մասնագիտությամբ ընդունվել է 19 դիմորդ, իսկ առկա ուսուցման մագիստրատուրա՝ 29 դիմորդ, որից 15-ը՝ «Գործարար կառավարում» և 14-ը՝ «Հանրային ֆինանսներ» մասնագիտություններով: Հեռակա ուսուցման բակալավրիատի համար սահմանվել է տարեկան 250.000, իսկ առկա ուսուցման մագիստրատուրայի համար՝ տարեկան 300.000 ՀՀ դրամ ուսման վարձ:

Մասնաճյուղի կողմից իրականացված ծրագրերը վերաբերում են ուսումնագիտական գործընթացներին, որի արդյունքում իրականացվել են.

1. «Վիվա Սել» ՄՏՍ ընկերության հետ համագործակցության արդյունքում կահավորվել է համակարգչային 1 լսարան, որին հատկացվել է 12 համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ, պրոյեկտոր, տպիչ և պատճենահանող սարք, կահավորվել է համացանցի Wi-Fi անկյուն:
2. «Օրանժ» ընկերության հետ համագործակցության շրջանակներում մասնաճյուղին է հատկացվել 1.000.000 ՀՀ դրամ, որը որպես կրթաթոշակ բաշխվել է սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող 12 ուսանողների միջև:
3. Մասնաճյուղի հիմնադրման 5-ամյակի կապակցությամբ 2012 թվականի դեկտեմբերի 2-ին կազմակերպվել է գիտաժողով, որին ներկայացվել է 42 գիտական զեկույցում այդ գիտաժողովի շրջանակներում նախատեսվում է հրատարակել հոդվածների ժողովածու, որը հետագայում կունենա պարբերական բնույթ:
4. «Եվրասիա» կազմակերպության կողմից իրականացված ծրագրի շրջանակներում էլեկտրոնային լրագրության դասընթացներ են կազմակերպվել մարզի տարբեր համայնքների 15 ակտիվիստների հետ:

2012 թվականի ընթացքում մասնաճյուղը դարձել է էլեկտրական էներգիայի և խմելու ջրի առանձին բաժանորդ (նախկինում ընդհանուր բաժանորդ էր հարակից դպրոցի հետ), որի շրջանակներում կառուցվել է ջրագիծ և էլեկտրահաղորդիչ գիծ: Մասնակի կառուցվել է նաև մասնաճյուղի համար նոր մուտքի ճանապարհ:

2012 թվականի ընթացքում մասնաճյուղում կազմակերպվել է Մուրադ Սարգսյանի անվան լսարանի բացումը, որը հովանավորվել է Սարգսյանների ընտանիքի կողմից և նվիրաբերվել է համակարգչային տեխնիկա, տեսաձայնա- սարքավորումներ:

Մասնաճյուղում ուսանողների ու դասախոսների հետ հանդիպումներ են կազմակերպվել մարզից ընտրված ՀՀ ԱԺ պատգամավորի, Վայոց ձորի մարզպետի, Եղեգնաձորի քաղաքապետի հետ: Քննարկումներ են կազմակերպվել նաև ՀՀ-ում Ղազախստանի դեսպանի ու ՌԴ դեսպանատան աշխատակիցների հետ:

Ուսանողական խորհրդի և ակտիվ ուսանողների ջանքերով պարբերաբար կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ: Ուսանողությունը ակտիվ է նաև մարզային միջոցառումներում, յուրաքանչյուր տարի մասնակցություն է ունենում Արենիի գինու փառատոնին, բերքի տոնին:

Խնդիրները

Եղեգնաձորի մասնաճյուղի հիմնական խնդիրներից են մարզական գույքի ձեռք բերումը, համակարգչային լսարանի ապահովումը, տեխնիկական միջոցների անբավարարությունը, շրջակայքի բարեկարգումը, լսարանային ֆոնդը:

9. 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համալսարանի բյուջեի եկամուտների և ծախսերի ցուցանիշներն արտահայտված են դրամական փաստացի հոսքերով:

9.1. 2012 թվականի բյուջեի կատարման արդյունքները

Համալսարանի փաստացի եկամուտները առ 31.12.2012 թ. կազմել են 3.589,6 մլն դրամ՝ նախահաշվային 3.446,8 մլն դրամի դիմաց, որը, 2011 թ. փաստացի եկամտի համեմատությամբ, ավելի է շուրջ 574,4 մլն դրամով: Մուտքերի մեջ հաշվի են առնվել նաև դրամաշնորհները: Գանձման ենթակա ուսման վարձից և կադրերի վերապատրաստումից 01.12.2012 թ. - 31.12.2012 թ. ժամանակահատվածում մուտքագրվել է 2.524,7 մլն դրամ, իսկ նախորդ տարիներին հաշվառված, սակայն չգանձված ուսման վարձի մնացորդը կազմում է 138 մլն դրամ, որը նախատեսվում է գանձել 2013 թվականին:

Եկամուտների առաջացման աղբյուրներն են՝

- տարեսկզբի մնացորդը՝ 441,1 մլն դրամ կամ 12,3%,
- բյուջեից ֆինանսավորումը՝ 305,8 մլն դրամ կամ 8,5%,
- գիտության գծով ֆինանսավորումը՝ 8,7 մլն դրամ՝ նախատեսված 7,6 մլն դրամից,
- վճարովի ուսուցումից ստացված մուտքերը՝ 2.515,2 մլն դրամ կամ 70%,
- այլ եկամուտներ՝ 311,5 մլն դրամ կամ 8,8% (որում ներառված են՝ սննդամթերքի իրացում, ծառայությունների մատուցում, տեղեկանքների տրամադրում, գրականության և այլ ակտիվների իրացում, դրամաշնորհի գումարներ՝ «Տեմպուս» ծրագրի գումարը՝ 256,2 մլն դրամ):

2012 թվականի փաստացի ծախսերը առ 31.12.2012 թ. կազմել են 2.734,1 մլն դրամ: Նախահաշվային ծախսերի համեմատությամբ տնտեսումը կազմել է շուրջ 212,7 մլն դրամ:

Ընդհանուր ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

- Աշխատավարձի ֆոնդը 2.249,7 մլն դրամ է, որը կազմում է ընդհանուր ծախսերի 82,3%-ը. 2011 թ. ցուցանիշների համեմատությամբ ավելացել է 9,6 մլն-ով: 2012 թ. փաստացի վճարված աշխատավարձը և հավելավճարները միասին կազմել են 1.677,9 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 61,4%-ը:
- Գրասենյակային, տնտեսական, սննդի ձեռքբերման ծախսերը կազմել են 16,4 մլն դրամ (տնտեսում՝ 16,4 մլն դրամ):
- Գործուղման և ներկայացուցչական ծախսերը կազմել են 11,7 մլն դրամ, (տնտեսում՝ 7,3 մլն դրամ):
- Էլեկտրաէներգիայի, վառելիքի, տրանսպորտի, կապի, ջեռուցման և կոմունալ ծախսերը կազմել են 65,1 մլն դրամ, (տնտեսում՝ 30,2 մլն դրամ), որից 11,4 մլն դրամն ուղղվել է ներքին ցանցի ստեղծմանը:
- Հրատարակչական և տպագրական ծախսեր՝ 6,3 մլն դրամ (նախատեսված 20 մլն-ից):
- 2012-ին ՀՀ ԽՀԿՏ-ին բյուջեի փաստացի վճարները առ 31.12.2012 թ. կազմել են 610,6 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 22%-ը, որից.
 - պարտադիր սոցապ վճարներ՝ 287,6 մլն դրամ,
 - եկամտահարկ՝ 281,2 մլն դրամ,
 - շահութահարկ՝ 36,4 մլն դրամ,
 - ավելացված արժեքի հարկ՝ 4,8 մլն դրամ,
 - այլ հարկեր և տուրքեր 0,6 մլն դրամ:
- Կազմակերպություններին և անձանց ֆինանսական աջակցության կամ օգնության գումարը կազմել է 59,5 մլն դրամ, որից 44,0 մլն-ը՝ ՀԵՀ-ին, 5,0 մլն-ը՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղին (մնացածը՝ այլ կազմակերպություններին և աշխատակիցներին):
- Համահայկական հիմնադրամին՝ 0,5 մլն դրամ:
- Ուսխորհրդին՝ 7,3 մլն դրամ (որից՝ «Ուսանողական աշուն - 2012» մարզամշակութային փառատոնի կազմակերպում, մասնակցություն Եվրոպական համաժողովին, «ՀՊՏՀ գավաթ - 2012» միջբուհական ինտելեկտուալ միջոցառման անցկացում, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված միջոցառման կազմակերպում և այլն):

- ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի ֆինանսավորում բյուջեից՝ 18,4 մլն դրամ:
 - Այլ ծախսերում ներառվել են պահակային ծառայության, դասախոսական կազմի և աշխատակիցների վերապատրաստման ծախսերը, գիտության գծով ծախսերը և այլ ընթացիկ ծախսեր («Տեմպուսի» գումարի որոշակի մասի շարժ):
 - 2012 թ. ընթացքում ձեռք են բերվել հիմնական միջոցներ, սարքավորումներ և տնտեսական գույք՝ 42,9 մլն դրամ, որի 5,5 մլն դրամը ուղղված է ՀՊՏՀ ուսանողների համար նախատեսված սննդի օբյեկտի գույքի ձեռքբերմանը:
 - Կապիտալ շինարարական և վերանորոգման, ինչպես նաև ընթացիկ վերանորոգման ծախսերը կազմել են 48,9 մլն դրամ կամ ծախսերի 1,8%-ը, որից 15,5 մլն դրամը՝ «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում:
- Այսպիսով՝ 2012 թ. աշխատանքների արդյունավետ կազմակերպման արդյունքում ծախսերի նկատմամբ եկամուտները գերազանցել են, և դրամական մանացորդը առ 31.12.2012 թ. դրությամբ կազմել է 855,4 մլն դրամ, որը 2012 թ. նախահաշվի ցուցանիշից ավելի է 355,4 մլն դրամով:

9.2. 2012 թվականի համախմբված՝ ՀՊՏՀ, Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի բյուջեի կատարման արդյունքները

- Համալսարանի փաստացի եկամուտները 2012 թ. կազմել են 3.822,4 մլն դրամ՝ նախահաշվային 3.643,7 մլն դրամի դիմաց, որը 2011 թ. փաստացի եկամտի համեմատությամբ ավելի է շուրջ 589,9 մլն դրամով: Եկամուտների առաջացման աղբյուրներն են՝
- տարեսկզբի մնացորդը՝ 465,2 մլն դրամ կամ 12,2%,
 - բյուջեից ֆինանսավորումը՝ 324,2 մլն դրամ կամ 8,5%,
 - վճարովի ուսուցումից ստացված մուտքերը՝ 2.709,2 մլն դրամ կամ 70,9%,
 - այլ եկամուտներ՝ 323,8 մլն դրամ կամ 8,5% (ներառյալ՝ դրամաշնորհի գումարներ, սննդամթերքի իրացում, ծառայությունների մատուցում, տեղեկանքների տրամադրում, գրականության և այլ ակտիվների իրացում):

2012 թվականի փաստացի ծախսերը կազմել են 2.929,8 մլն դրամ (նախահաշվային ծախսերի համեմատությամբ շուրջ 213,4 մլն դրամի տնտեսում):

Ընդհանուր ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

- Աշխատավարձի ֆոնդը՝ 2.409,9 մլն դրամ, որը կազմում է ընդհանուր ծախսերի 82,3%-ը: 2012 թ. փաստացի վճարված աշխատավարձը և հավելավճարները, ներառյալ դեկտեմբեր ամիսը, կազմել են 1.799,5 մլն դրամ, որը ընդհանուր ծախսերի 61,4%-ն է:
- Գրասենյակային, տնտեսական, սննդի ձեռքբերման ծախսերը կազմել են 18 մլն դրամ:
- Գործուղման և ներկայացուցչական ծախսերը կազմել են՝ 12,1 մլն (տնտեսում՝ 8,5 մլն դրամ):
- Էլեկտրաէներգիայի, վառելիքի, տրանսպորտի, կապի, ջեռուցման և կոմունալ ծախսերը կազմել են 75,8 մլն դրամ կամ ծախսերի 2,6%-ը:
- 2012-ին ՀՀ բյուջեին փաստացի վճարները կազմել են 652 մլն դրամ, որն ընդհանուր ծախսերի 22,3%-ն է, որից.
 - պարտադիր սոցապ վճարներ՝ 310,3 մլն դրամ,
 - եկամտահարկ՝ 294,7 մլն դրամ,
 - շահութահարկ՝ 41,1 մլն դրամ,
 - ավելացված արժեքի հարկ՝ 4,9 մլն դրամ,
 - այլ հարկեր և տուրքեր՝ 0,9 մլն դրամ:
- Կազմակերպություններին և անձանց ֆինանսական աջակցության կամ օգնության գումարը կազմել է 59,7 մլն դրամ:
- 2012 թ. ընթացքում ձեռք են բերվել հիմնական միջոցներ, սարքավորումներ և տնտեսական գույք՝ 48,8 մլն դրամ:
- Կապիտալ շինարարական և վերանորոգման, ինչպես նաև ընթացիկ վերանորոգման ծախսերը կազմել են 52,7 մլն դրամ կամ ծախսերի 1,8%-ը:

Այսպիսով՝ 2012 թ. ծախսերի նկատմամբ եկամուտները գերազանցել են, և դրամական մնացորդները առ 01.01.2013 թ. դրությամբ կազմում են 892,6 մլն դրամ, որը 2012 թ. նախահաշվի ցուցանիշից ավելի է 392,1 մլն դրամով:

9.3. 2013 թվականի բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները

Համալսարանի 2013 թվականի բյուջեի եկամուտները նախատեսված են 3.944,3 մլն դրամ, այդ թվում. տարեսկզբի մնացորդը՝ 855,4 մլն դրամ (ներառյալ «Տեմպուս» ծրագրի գումարը՝ 231,3 մլն դրամ):

Պետբյուջեից ֆինանսավորումը կկազմի 305 մլն դրամ կամ 7,7%:

Վճարովի համակարգից ստացվող եկամուտները կկազմեն 2.689,6 մլն դրամ կամ 68,2%, այլ եկամուտները՝ 94,3 մլն դրամ կամ 2,4%:

Պետության և այլ կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերից նախատեսվում է 11,5 մլն դրամ:

2012 թ. փաստացիի նկատմամբ 2013 թ. բյուջեի նախագծով եկամուտները կավելանան մոտ 354,7 մլն դրամով կամ 9%-ով:

2013 թ. բյուջեով ծախսերը կազմելու են 3.306,9 մլն դրամ, այդ թվում.

- ընթացիկ ծախսերը՝ 1.928,4 մլն դրամ կամ 58,3%,
- կապիտալ ծախսերը՝ 202,0 մլն դրամ կամ 6,1%, որը ներառում է կապիտալ նորոգման և շինարարական ծախսեր՝ 90,0 մլն դրամ, հիմնական միջոցների և գույքի ձեռքբերում 69,0 մլն դրամ:

Ընդհանուր ծախսերի ծավալում աշխատավարձի ֆոնդը նախատեսվում է 2.260,0 մլն դրամ:

2013 թ. պետբյուջեին կատարվող վճարումները նախատեսվում են 653,0 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 19,7%-ը (հաշվի է առնված նաև 01.01.2013 թ. ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունը):

2013 թ. գիտական գործունեությանը նախատեսվում է հատկացնել 108,3 մլն դրամ:

Համալսարանի 2013 թ. բյուջեն 2008 թ. փաստացի ցուցանիշի համեմատությամբ կավելանա.

- եկամուտները՝ 1,7 անգամ կամ 1.762,0 մլն դրամով,
- ծախսերը՝ 1,8 անգամ կամ 1.492,0 մլն դրամով,
- աշխատավարձի ծախսը՝ 1,6 անգամ կամ 803,0 մլն դրամով,
- վճարումները պետբյուջեին՝ 225,0 մլն դրամով:

9.4. 2013 թվականի համախմբված բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշները

ՀՊՏՀ (ներառյալ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղեր) 2013 թ. համախմբված բյուջեի եկամուտները նախատեսված են 4.234,9 մլն դրամ, որից տարվա ընթացիկ եկամուտները կկազմեն 3.342,3 մլն դրամ կամ 78,9%, տարեսկզբի մնացորդը՝ 892,6 մլն դրամ կամ 21,1%:

Ընթացիկ տարվա եկամուտների մեջ ուսման վարձը կազմեն 2.922,2 մլն դրամ, ֆինանսավորումը պետբյուջեից՝ 324,1 մլն դրամ կամ 7,7 %, այլ եկամուտներ՝ 85,5 մլն դրամ կամ 2%:

2012 թ. փաստացի եկամուտների համեմատությամբ 2013 թ. բյուջեի եկամուտներն աճելու են 412,5 մլն դրամով կամ 9,7% -ով:

2013 թ. համախմբված բյուջեի ծախսերը նախատեսվում են 3.584,9 մլն դրամ, որից՝ ընթացիկ ծախսերը՝ 2.114,4 մլն դրամ կամ 59%, կապիտալ ծախսերը՝ 210,5 մլն դրամ կամ 5,9%:

Աշխատավարձի ֆոնդը կկազմի 2.473,8 մլն դրամ կամ 69%:

Պետբյուջեին կատարվող վճարները կկազմեն 711,8 մլն դրամ կամ 19,9%:

2013 թ. համախմբված բյուջեի ցուցանիշը 2008 թ. փաստացի ցուցանիշի համեմատությամբ ավելացել է.

- եկամուտները՝ 1,8 անգամ,
- ծախսերը՝ 1,8 անգամ,
- աշխատավարձի ծախսը՝ 1,7 անգամ կամ 911 մլն դրամով,
- վճարումները պետբյուջեին՝ 1,6 անգամ կամ 257.8 մլն դրամով:

ԵԶՐԱՓՈՒԿ

2012 թվականին, նախորդ տարիների նման, համալսարանի կառավարումն իրականացվել է կոլեկտիվ կառավարման մարմինների ակտիվ և արդյունավետ մասնակցությամբ, գումարվել են ռեկտորատի 25, գիտական խորհրդի 12 նիստեր, որոնց ընթացքում քննարկվել և որոշումներ են ընդունվել ուսումնագիտական, կազմակերպական և ուսումնադաստիարակչական կարևորագույն հիմնախնդիրների վերաբերյալ:

Գալիք տարիների կարգախոսը պետք է լինի մրցունակության, յուրաքանչյուր ստորաբաժանման, յուրաքանչյուր աշխատակցի, յուրաքանչյուր դասախոսի, յուրաքանչյուր ուսանողի շուկայական պահանջվածության բարձրացումը, համալսարանի առօրյայում մրցութային ընթացակարգերի ներդրումը, ռեսուրսների բաշխումը մրցութային հիմունքներով, դասախոսների ընտրանքային աջակցությունն ըստ աշխատանքի ուղղությունների:

Առաջիկա տարիներին կպահանջվի համալսարանի առջև կանգնած խնդիրների լուծման համար նպատակամետ աշխատանք, ինչի համար համալսարանի բոլոր ուժերի և ռեսուրսների կենտրոնացումը կունենա կենսական նշանակություն:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.1

Ոսանողների թիվը 2006-2012 թ.

| | 01.12.2006 թ. | 13.12.2007 թ. | 10.12.2008 թ. | 24.10.2009 թ. | 24.10.2010 թ. | 24.10.2011 թ. | 24.10.2012 թ. |
|------------------------------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| Ոսանողների թիվը, այդ թվում՝ | 5362 | 6113 | 6144 | 7199 | 7929 | 7649 | 8058 |
| առկա ուսուցման բակալավրիատ | 4979 | 5312 | 4637 | 4901 | 4980 | 3972 | 3940 |
| հեռակա ուսուցման բակալավրիատ | 310 | 623 | 954 | 1357 | 1736 | 1727 | 1938 |
| առկա ուսուցման մագիստրատուրա | 73 | 178 | 553 | 852 | 883 | 1066 | 1102 |
| հեռակա ուսուցման մագիստրատուրա | - | - | - | 89 | 330 | 884 | 1078 |

Հավելված 1.2

Ոսանողների ընդունելությունը 2006-2012 թթ.

| | 2006 թ. | 2007 թ. | 2008 թ. | 2009 թ. | 2010 թ. | 2011 թ. | 2012 թ. |
|---|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|-------------|
| Առաջին կուրս ընդունվածների ընդհանուր թիվը, այդ թվում՝ | 1343 | 1663 | 2220 | 2363 | 2571 | 1454 | 2687 |
| առկա ուսուցման բակալավրիատ | 1061 | 1206 | 1376 | 1375 | 1302 | 140 | 1210 |
| հեռակա ուսուցման բակալավրիատ | 242 | 348 | 392 | 495 | 540 | 143 | 452 |
| առկա ուսուցման մագիստրատուրա | 40 | 109 | 452 | 404 | 480 | 605 | 493 |
| հեռակա ուսուցման մագիստրատուրա | - | - | - | 89 | 249 | 566 | 331 |
| գործատուների հետ համատեղ իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրով մագիստրատուրա | - | - | - | - | - | - | 201 |

Համալսարան ընդունված ուսանողների թիվը 2012-2013 ուսումնական տարում Հավելված 1.3

| Ֆակուլտետ | Մասնագիտություն | Այդ թվում՝ | | | | | ՀԴՀ | | Արևիկա թվում | Անհատական պահանջներ | ՔԲ | ԼՂՀ | Հասցեով, ԱՏ | Վեցամյակի համար, ԱՏ | Վեցամյակի համար, ԱՏ | Վեցամյակի համար, ՏՊ | Վեցամյակի համար, ԱՏ | Գրանցվածներ | |
|------------------------|-----------------|------------|----------|----------|----------|----------|------------|----------|--------------|---------------------|----------|-----------|-------------|---------------------|---------------------|---------------------|---------------------|-------------|------------|
| | | Այդ թվում՝ | | Արևիկա | ՍՏ | Արևիկա | | | | | | | | | | | | | |
| | | 105-րդ | 106-րդ | | | | | | | | | | | | | | | | |
| Ֆինանսական | | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 |
| Ֆինանսներ | | 10 | 6 | | | | 48 | 3 | 4 | 9 | 1 | 0 | | | 0 | 16 | 40 | 0 | 131 |
| Հանրային ֆինանսներ | | 0 | | | | | 0 | | | | 18 | | | | 10 | 29 | 0 | 0 | 57 |
| Արժեթղթ. շուկ. և կառ. | | 2 | | | | | 30 | | | | | 7 | | | 11 | 0 | 16 | 0 | 66 |
| Մաքսային գործ | | 2 | | | 1 | | 32 | | | | 6 | 2 | | | 7 | 13 | 26 | 0 | 86 |
| Բանկային գործ | | 2 | 1 | | | | 39 | | | 5 | | 2 | | | 18 | 24 | 32 | 0 | 122 |
| Ապահովագրական գործ | | 4 | | | | | 48 | 4 | | | 7 | | | | 10 | 17 | 17 | 0 | 107 |
| Հարկաբյուր. իրավունք | | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 8 | 0 | 0 | 0 | 8 |
| Հարկային վարչարար. | | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 0 | 38 |
| Մաքսային վարչարար. | | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 0 | 27 |
| Պետ. եկ. վերլ. և կանխ. | | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 0 | 26 |
| Բանկային գործի կազմ. | | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 0 | 44 |
| Կորպորատիվ ֆինանսներ | | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 12 | 0 | 30 | 42 |
| Ընդամենը | | 20 | 7 | 0 | 0 | 1 | 197 | 7 | 4 | 14 | 1 | 40 | 2 | 2 | 64 | 111 | 131 | 165 | 754 |

| Հաշվ. հաշվ. հաշի | Լ և աղյուսի | Կասակարման | | | | | | | | | | | | | | | | | | | |
|------------------|---------------------------|---------------------|----------|----------|----------|----------|---------------------|----------|----------|----------|-----------|---------------------|----------|-----------|-----------|-----------|---------------------|------------|------------|--|--|
| | | Ստույգ. և միջ. տես. | | | | | Ստույգ. և միջ. տես. | | | | | Ստույգ. և միջ. տես. | | | | | Ստույգ. և միջ. տես. | | | | |
| | | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | | |
| 1 | Հաշվ. հաշվատուն (ըստ ճյ.) | 12 | | | 9 | 1 | 47 | 2 | 1 | 5 | | 10 | 1 | 1 | 11 | 22 | 27 | 0 | 137 | | |
| | Առաջիկա | 1 | | | | | 28 | | | | 4 | | | | 18 | 20 | 19 | 0 | 90 | | |
| | Տնտեսագիտ. վերլուծ. | 1 | | | | | 27 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 0 | 28 | | |
| | Ընդամենը | 14 | 0 | 0 | 9 | 1 | 102 | 2 | 1 | 5 | 0 | 14 | 1 | 1 | 29 | 42 | 46 | 0 | 255 | | |
| | Կատարված | 2 | | | | 1 | 41 | 2 | 3 | 3 | 0 | | | | 0 | 0 | 32 | 0 | 83 | | |
| | Պետ. և մոն. կատարված | 2 | | | | | 39 | | | | 4 | | | | 13 | 15 | 19 | 0 | 92 | | |
| | Հակաճգն. կատարված | 2 | | | | | 28 | | | | 5 | | | | 10 | 0 | 0 | 0 | 45 | | |
| | Զբոսաշրջ. կատարված | 2 | | | | | 28 | | | 2 | 6 | | | | 8 | 0 | 29 | 0 | 75 | | |
| | Ձեռ. տնտ. և կառ. (ըստճյ.) | 4 | | | | | 51 | | | 2 | 6 | 1 | | | 8 | 0 | 30 | 0 | 101 | | |
| | Ձեռն. գործ. կազմ. և կառ. | 0 | | | | | 0 | | | | 2 | 1 | | | 11 | 0 | 0 | 0 | 13 | | |
| | Այլ. տնտեսագիտություն | 5 | | 1 | | | 43 | | | | 7 | 2 | | | 5 | 0 | 0 | 0 | 60 | | |
| | Գործարար կատարված | 0 | | | | | 0 | | | | 12 | | | | 13 | 22 | 0 | 0 | 47 | | |
| | Նախագծերի կատարված | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 14 | 0 | 0 | 14 | | |
| | Սոցիալական կատարված | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 15 | 0 | 0 | 15 | | |
| | Կրթության կատարված | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 15 | 0 | 0 | 0 | 15 | | |
| | Աշխատանքային իրավունք | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 8 | 0 | 0 | 0 | 8 | | |
| | Ընդամենը | 17 | 0 | 1 | 0 | 1 | 230 | 2 | 3 | 7 | 0 | 42 | 4 | 0 | 91 | 66 | 110 | 0 | 568 | | |
| | Տնտես. տեսություն | 4 | | | | | 36 | | | | 7 | | | | 9 | 0 | 0 | 0 | 56 | | |
| | Միջ. տնտ. հարաբ. | 3 | | | | | 55 | 3 | | | 10 | | | | 13 | 31 | 20 | 0 | 135 | | |
| | Մակրոտնտ. քաղ. և կառ. | 4 | | 1 | | | 52 | | | | 5 | | | | 8 | 0 | 27 | 0 | 96 | | |
| | Ծառ. ոլորտ. պետ. կարգ. | 0 | | | | | 0 | | | | 2 | | | | 5 | 0 | 0 | 0 | 7 | | |
| | Մակրոտնտ. վերլուծություն | 0 | | | | | 0 | | | | 1 | | | | 6 | 0 | 0 | 0 | 7 | | |
| | Բնօգտ. տնտեսագիտ. | 3 | | | | | 26 | | | | 4 | | | | 4 | 0 | 0 | 0 | 37 | | |
| | Հողագործ. հարաբեր. | 6 | 1 | | | | 40 | | | | 4 | | | | 4 | 0 | 27 | 0 | 81 | | |
| | Անշարժ գույքի գնահատ. | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 0 | 9 | | |
| | Պետ. գույքի կատարված | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 0 | 16 | | |
| | Տնտ. գործ. բնագավառ. | 0 | | | | | 0 | | | | 0 | | | | 0 | 0 | 0 | 11 | 11 | | |
| | Ընդամենը | 20 | 1 | 1 | 0 | 0 | 209 | 3 | 0 | 0 | 33 | 0 | 0 | 49 | 31 | 74 | 36 | 455 | | | |

| | 2 | 29 | | | | 5 | 11 | 13 | 17 | 0 | 77 |
|-----------------------------|-----------|----------|----------|----------|----------|-------------|-----------|-----------|------------|------------|------------|
| Կոմերցիա | | | | | | | | | | | |
| Պարեն. ապր. ապր. | 2 | 24 | | | | 3 | 6 | 0 | 0 | 0 | 35 |
| Ոչ պարեն. ապր. ապրանքագ. | 2 | 20 | | | | 4 | 6 | 0 | 16 | 0 | 48 |
| Շունկայաբան. (մարքեթինգ) | 4 | 57 | | | | 0 | 9 | 10 | 23 | 0 | 103 |
| Մարքեթինգ. հարդոր. | 0 | 0 | | | | 5 | 13 | 14 | 0 | 0 | 32 |
| Մարքեթինգ. հետազոտ. | 0 | 0 | | | | 3 | 10 | 16 | 0 | 0 | 29 |
| Քիմիկատի կազմակերպում | 3 | 53 | | 1 | | 5 | 12 | 20 | 19 | 0 | 113 |
| Ընդամենը | 13 | 0 | 0 | 1 | 0 | 25 | 0 | 67 | 73 | 75 | 0 |
| Վիճակագրություն | 4 | 41 | 1 | | | 5 | 7 | 0 | 0 | 0 | 58 |
| Մաթ.մեթ. և մոդ. տնտ. մեջ | 4 | 50 | | | | 4 | 11 | 0 | 0 | 0 | 69 |
| Կառ. տեղ. համակարգեր | 4 | 50 | | 1 | | 0 | 0 | 0 | 16 | 0 | 71 |
| Էլեկտրոնային քիմիա | 0 | 0 | | | | 4 | 8 | 8 | 0 | 0 | 20 |
| Ընդամենը | 12 | 0 | 0 | 1 | 0 | 13 | 0 | 26 | 8 | 16 | 0 |
